

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.438

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՑԵՐ. ՄԵԼԻՔ-ՅՈԼՉԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

334.63
Մ-49

ԵՐԵՎԱՆ 1925

334.63
Մ-49
300
Ջ700-ՄԵ
15 JAN 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

№ 2 „ՀԵՅԴՅՈՒՂԱՌՈՒ“-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Յեր. Մելիք-Գոյլաճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԵՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publichnaya Biblioteka
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

337

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԵՅԴՅՈՒՂԱՌՈՒ“-Ի

ՅԵՐԵՎԱՆ 1925

27 JUN 2013

26438

Գիրքը շարված է Լինոտիպով և հրատարակված մեկ որվա ընթացքում:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՈ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 257բ. Գատ. 1123 Տիրաժ 1500

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Ընթերցողի ուշադրության առաջադրվող հապճեպ կազմած այս աշխատությունը պետք է կրեր բացառապես հաշվետվության բնույթ, քանի վոր հեղինակը նպատակ է ունեցել Հ. Կ. Կուսակցության 4-րդ համագումարին ներկայացնել Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերացիայի մեկ տարվա գործունեության սեղմ պատկերը: Սակայն ամեն անգամ այդ սկզբունքից նահանջելիս ի նկատի չ ունեցված արծարծվող խնդրի կարևորությունը միայն: Հեղինակն անկասկած չի սպասել և նպատակ էլ չի ունեցել կանգ առնել կոոպերացիայի բարդ և բազմազան բոլոր խնդիրների վրա:

29 Նոյեմբերի 1925 թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերացիան իր վրա յի բեվեռել Կոմունիստական կուսակցության ու Խորհրդային Իշխանության ուշադիր հայացքը: Կարելի յի վստահորեն պնդել, որ չնայելով այդ հանգամանքի նա այսոր մեր ժողովրդական տնտեսության մեջ վորոշ և կարևոր դեր և կատարում: Նրա միությունը—Հայգյուղկոոպն արդեն իսկ ձևավորված տնտեսա—կազմակերպչական կենտրոն և մեկ հարյուր հիսունից ավել կոոպերատիվների և յերկու տասնյակ հատոր գյուղացիական տնտեսությունների: Խորհրդային իշխանությունն անվերապահորեն չարունակում և վոչ միայն ֆինանսական զգալի ոգնություն ցուցադրել, այլ և անգամ՝ վորոշելով նրա իրավական կամ տնտեսա-կազմակերպչական գործունեության սահմանները յերկրի էկոնոմիկայում—լայն հորիզոն գծում գյուղացիական ցրված արտադրությունների հնարավոր կոոպերացման:

Այս առաջարկում Խորհրդային իշխանության ընթացիկ քաղաքական դիծը, հարկավ, նորամուծություն չէ. նա բղխում է պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության այն դաշինքից, որը հասցրեց մեզ մինչ իշխանության դրավում: Դեռ ևս Խորհուրդների 8-րդ համագումարում ընկ. Լենինն ընդգծում էր, որ «Գյուղացիությունը պիտի ակտիվ կերպով մասնակցի յերկրի սոցիալիստական շինարարության առանցքային անգամ ավելի լան պատերազմում»: Ցեվ յելնելով հիմնական այդ սկզբունքից հեղափոխության հանճարեղ տարատեղը հրապարակի վրա յի դնում միլիոնավոր մանր սեփականատեր գյուղացիության կազմակերպման հասարակական մեթոդները: Զարկ տալ գյուղի արտադրողական ուժերին, մեխանիզացիայի յենթարկել այն, ստեղծել գյուղատնտեսական ու քաղաքային արդյունաբերության զարգացման ներդաշնակ նախապայմաններ—ահա այն հերթական հարցերը, որ առաջադրված են կոոպերացիային, որպես գյուղացիության կազմակերպող հասարակական սիստեմի:

Կոոպերացիան*) իր ազդեցության դիրքն առնելով սեփականա-

---

*) Այստեղ և հետագայում մեր խոսքը վերաբերում է գյուղատնտեսական կոոպերացիային:

տեր արտադրող գյուղացուն, վոչ միայն պիտի ղեկավարի նրա տնտեսական աշխատանքը, պլանաչափ, ներդաշնակ զարգացնի նրա բոլոր պրոցեսները, շաղկապելով այն սոցիալիստական արդյունաբերության հետ, այլ և իր կազմակերպչական մեթոդներով պիտի դաստիարակի սոցիալիստական հասարակարգի համար սոցիալիստորեն մտածող ու արտադրող քաղաքացիներ—կոոպերատորներ: «Մեզ մոտ կոոպերացիայի վրա նայում են արհամարհանքով,—գրում է ընկ. Լենինը,—չհասկանալով թե վո՞ըպիսի բացառիկ նշանակություն ունի այդ կոոպերացիան, նախ՝ սկզբունքային տեսակետից...ապա՝ նոր կարգերին ավելի պարզ, դյուրին և գյուղացուն մատչելի յեղանակով անցնելու տեսակետից»: Իսկ քիչ հետո հորդորում է՝ «սովորել գործնականապես կառուցել սոցիալիզմը այնպես, վոր յուրաքանչյուր գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցման աշխատանքներին». կոոպերացիան ներկայումս մեզ մոտ դեպի սոցիալիզմ տանող ամենակարճ ճանապարհն է և Խորհրդային իշխանությունն ամեն ջանք ու միջոց չի խնայում այդ ճանապարհը հաստատ ու բանուկ դարձնելու:

Սակայն կան դեռևս այնպիսի միամիտներ, վորոնք այսորվա կոոպերացիայի զարգացման մեջ նշմարում են վտանգավոր սաղմեր, հակոտնյա տրամադրություններ ընդդեմ պետական արդյունաբերության նորմալ զարգացման ու ծաղկման: Մինչդեռ ընկ. Լենինը խոսելով կոոպերացիայի և պետական կապիտալիզմի մասին, սեվով սպիտակի վրա գրել է*) «Կոոպերացիային ազատություն և իրավունքներ տալ Ռուսաստանի ներկայիս պայմաններում՝ միևնույն է թե ազատություն և իրավունքներ տալ կապիտալիզմին: Այս ակներև ճշմարտության առաջ աչք գոցելը տիմարություն և հանցանք կը լիներ». չնայած այս պարզ բնորոշման, այնուամենայնիվ կան այնպիսի հեռատես «տնտեսագետներ» (ըստ Լենինի՝ տիմարներ), վորոնք դուշակում են կոոպերատիվ կապիտալիզմի մեր պայմաններում իբրև թե վտանգավորությունը: Մենք առորյա աշխատանքների ընթացքում հաճախ ենք լսում այդ անտեղի, յեթե վոչ անմիտ «նկատառումները» թերահավատները մեկնաբանում են այդ վոչ թե յենելով լենինիզմի հիմունքներից, այլ չարլոն այն դատարկախոսությունից,

*) В. ЛЕНИН, Собр. сочинений, том XVIII стр. 218

թե, մանր բուրժուական տարրի (գյուղացու) կազմակերպումը (ապա և նրա կազմակերպությունը—կոոպերացիան) ընդհանրապես վտանգավոր է:

Ավելորդ յերկյուղ. «Տնտեսության ներկա վերելքին, պրոլետարիատի և գյուղացիության մերձեցման քաղաքականության հաստատ կիրառման չրջանում վախենալ թե գյուղերի և ավաններին կազմակերպված մանր բուրժուական մասսաները կը գնան Խորհրդային իշխանության դեմ—անմտություն է»:*) Ընդհակառակը «կոոպերատիվի կազմակերպումն ամենալավ միջոցն և աղբատ ու միջակ գյուղացիներին գյուղի կուլակների ազդեցությունից խլելու»:**) Հարկ չկա յերկյուղելու:

Միացնելով գյուղացիական մանր տնտեսությունները կոոպերատիվում, ապա միության միջոցով Խորհրդային տնտեսության սիստեմին—կոոպերացիան ինքնին հանդես է գալիս վորպես պետական կապիտալիզմի հիմնական ձևերից մեկը: Ոգավելով պետական լիակատար հովանավորությունից նա ամրապնդում է մեր տնտեսական բազաբականության նվաճումները գյուղում. թե վարկային և թե հարկային քաղաքականությունը պետք է ընթանա և իրոք ընթանում է կոոպերացիայի մաքսիմալ նվաճումների ամրացման գծով: Գյուղատնտեսական մանր վարկը հետզհետե դառնում է կոոպերատիվ վարկ—կոոպերատիվ սիստեմը դուրս, ամրապնդող:

Պետական կապիտալիզմը չի ժխտում «մանր բուրժուական» տարրերի կոոպերացիան և անտես չի առնում նրա սոցիալիստական միտումը: Սակայն դա չի նշանակում, վոր կոոպերացիան չի վարելու մահացու պայքար իր ներսում գոյություն մանր-բուրժուական տարրերը, վորն անծանոթ չի կարող համարվել մասսայական ամեն մի կազմակերպության զարգացման պերիոդներում: Նա հանրացնելով (обобществляя) հաղարավոր մանր սեփականատեր գյուղացիների արտադրությունը, նրա աշխատանքի միջոցները—այնուամենայնիվ տարրերի ջանք ու յեռանդ և հարկավոր դատարակելու նրան, հղկելու հին բարքերի ազդեցությունից: Կոոպերացման պրոցեսը, վորքան նրա սրյեկտը հետաղեմ և իր տնտեսական կառուցվածքով—յերկար տարիների

*) Вл. САРАБЬЯНОВ.— Кооперация в системе советского хозяйства, м. 1925 г.

**) ibidem стр. 25—26

գործ է. ավելորդ վոգևորություն այս ասպարիզում կարող է միայն վատնել ընդհանուր գործին:

Մեզ մոտ, ինչպես և վողջ Միության սահմաններում, գյուղատնտեսության կոոպերացումը ամենից հաջող զարգանում է արտադրության առանձին պրոցեսների ասպարիզում*)—վարկավորման, մատակարարման, վաճառահանման: Հասարակ այս ձևերի շնորհիվ հնարավոր է գյուղատնտեսության արտադրողական ուժերի վերականգնումն, տեխնիկական պրոգրես՝ գեպի մեխանիզացիա և կոլլեկտիվիզացիա:

Միջանկյալ այստեղ յերկու խոսք այն մասին, թե ինչո՞ւ Հայաստանում կոլլեկտիվներ և կոմմունաներ—այսինքն կոոպերացիայի ամենարարձր տեսակներ՝ չկան. արդյո՞ք շնորհիվ նրան, որ «Հայդյուղկոոպը» ծուլանում է կամ թշնամի է դրանց, թե արդյո՞ք այլ՝ ավելի խորը պատճառներ կա՞ն այստեղ, որ առընչություն չունեն «Հայդյուղկոոպի» բարի ցանկությունների հետ:

Կոմմունան միացնում, հանրացնում է վոչ թե գյուղացու առանձին-առանձին տնտեսական պրոցեսները (վառելք, վերամշակում, սպառում և այլն), այլ նրա վողջ տնտեսության բոլոր մոմենտները. նշանակում է այստեղ ավելի բարդ փոխհարաբերություններ պիտի լինեն կոլլեկտիվի և անդամի միջև, քան առաջին դեպքում: Սեփականատեր գյուղացին գյուղությամբ չի համաձայնվում այդպիսի աշխատանքին վոչ միայն մեզանում, այլ և Միության սահմաններում: Կոոպերատիվների ամենապարզ ձևերը դեռ ևս հայ գյուղացու համար մարսելի չեն (ի հարկե մենք նկատի ունենք կոոպերատիվ՝ իր լայն իմաստով): Անդամ սպառողական կոոպերացիան, որ Հայաստանում ունի 20—25 տարվա պատմություն, սակայն ելի գյուղացին այսոր նրա գաղափարին չի կաչել բավանդակապես և անվերապահորեն: Սակայն այս բոլորը թերևս յերկրորդական համարվի կոմունաների ծագման դանդաղության ու անհնարինության համար: Ի՞նչ է ասում փորձը. կազմակերպված մի կոմունա լիկվիդացիայի յենթարկվեց շնորհիվ անդամների միջև ծագած չնչին տարաձայնության**): Այնուհետև ներկայումս,

*) Сборник «С.-Х. Кооперация в системе Государственного капитализма М. 1924 г.

**) Տարաձայնության առարկան մի վարունգ է յեղել...

առանձնապես վերաբնակվող գաղթականներն առանձին սեր ունեն «կոմունաներ» կազմելու, չգիտենք՝ յեթե դա կոմունիստական գաղափարախոսության բարձր գիտակցության ապացույցը ներկայացնելու հանգամանք է, ապա «Հայդյուղկոոպ»-ին չպիտի մեղադրել, յերբ նա հրաժարվում է այդ մկրտությունը կատարել, իսկ յեթե դա միջոց է գրամական աջակցության կամ առավելագույն ուշադրության, նույնպես կոոպերացիա չէ, և վերջապես յեթե նա կամավոր միություն է, աշխատանքի բոլոր ասպարեզներում հանրացած սկզբունքների կիրառմամբ— «Հայդյուղկոոպ»-ը վորպես կոոպերատիվների կենտրոն, իր աջակցությունը արտամղելով հանդերձ՝ պարտավոր է զգուշացնել նրա կիրառման, կոմունայի գաղափարի իրագործման կոնկրետ դժվարությունները գյուղի ներկա պայմաններում:

Հարկի է նախապես ասել, վոր վորպես եքսպերիմենտ այս ասպարիզում. ավյալ սրյեկտների նկատմամբ—յուրաքանչյուր փորձ անհաջողության և հանդիպելու. խոմ չի՞ կարելի չարլոնը այս ասպիճանի հասցնել: Յեթե սրինակ Տուլայի շրջանում մի վոմն Միչուրին տարիների իր համառ աշխատանքով հեղաշրջում է առաջացրել պտղաբուծության սացիոնալ զարգացման գործում—չի նշանակում, թե մենք վաղը կարող ենք նույն խնդիրը դնել Նոր-Բայազետի գյուղացու առաջ, վորպես հերթական խնդիր: Ամենալավ դեպքում անհրաժեշտ է համառ և յերկարատև աշխատանք, նվազագույն պայմանների նախապատրաստումն: Միևնույնը կոմունաների նկատմամբ. յեթե Մոսկվայի նահանգում գյուղ վերապրած պրոյեկտարները համառորեն կառչել են գիտակցորեն կոմունաների զարգացման՝ նշանակում է կան և նպաստող տնտեսական (ել չեմ ասում կուլտուրական) նախադրյալներ,—դա դեռ ևս չի նշանակում, վոր Թայչարուխի բարձունքներում կամ Վեղի-Բասարում անպատճառ կարող է պատվաստվել հայկական կոմունան անհատապաշտ գյուղացիների ձեռքով: Վոգևորություն, Ֆրազյոլոգիան տեղի պիտի տա ավյալ տնտեսական ամբողջի, կոնկրետ հնարավորությունների, միանգամայն սրյեկտիվ պայմանների հաշվառման գումարին:

Մենք գերադասում ենք կոոպերատիվ շինարարության ներկա շրջանում գյուղացիության ամենատարբրական կոոպերատիվների տեսակն ու ծավալումն—անունով կոմունա՝ բայց էությամբ վո-

չինչ,—կոոպերատիվ բջիջներից։ Պետք է վերցնել զգուշ, սակայն հաստատ գիծ։

Կոոպերատիվ շինարարության ասպարիզում կարևոր, անդամ վճռական, նշանակություն ունի նրա կազմակերպման կամավոր սկզբունքի կիրառումը։ Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պետք է զգա իրեն ամբողջ անհրաժեշտ մասնիկը, շղթայի ողակը, վոր յեթե հաչվի չառնվի—չի կազմվի վոչ ամբողջը և վոչ շղթան։ «Նվելի լավ է քիչ, բայց լավ»՝ բոլորանվեր կարելի յե վերագրել գյուղատնտեսական կոոպերացիային. մինչդեռ այդ սկզբունքն այդ ասպարիզում հնարավոր չի յեղել կիրառել, շնորհիվ տեղական որգանների հեղափոխական անհամբերողականության։ Կոոպերատիվների, վերին հրամանի շնորհիվ, թվական աճման խնդիրը դեռ մինչև այժմս էլ կապում են սիստեմամբ պետական այս կամ այն ոգնության հետ։ Ցեվ տարորինակ չպիտի համարել այն յերևույթը, յերբ կոոպերատիվներին նայում են վորպես պետական ձեռնարկի՝ նրա վարչության վրա՝ վորպես նշանակովի պաշտոնյաների։ Հիմանդոտ, անառողջ այս մոտեցումները վոչ միայն չեն ոգնում արտադրական միջոցների հարաճյուն զարգացման, այլ և վտանգում են կոոպերացիայի այն խոշոր դաղափարը, վոր մարմնացրել է Իլյիչն իր «Կոոպերացիայի մասին» հոդվածներում։ Հեղափոխական անհամբերողականության պետք է հակադրել ընթացիկ տարում կոոպերացիայի զարգացման, ծաղկման և ամրապնդման համար կոոպերատիվ դեմոկրատիա։ 6

Քանիցս մենք ընդգծել ենք այն խոշոր դերը և պարտականությունը, վոր ունի «Հայգյուղկոոպ»-ը—կոոպերացիան գյուղատնտեսության մեքենայացման ասպարիզում։ Մեքենան գյուղի կոոպերացված տնտեսության դաշտում, արտում կամ կալի մեջ աշխատելիս՝ դա սկիզբն է սոցիալիստական շինարարության ասպարիզում տանելիք հաղթանակների։ Խոշոր մեքենաները ամենայով առհավատչյան են մանր տնտեսությունների միավորման, կոնցենտրացիային, վորը վերջին հաչվով տանելու յե մեզ դեպի սոցիալիստական խոշոր տնտեսություն։ Մեքենան ամենալավ միջոցն է տնտեսության արտադրողականության բարձրացման. ով ունի մեքենա կամ վարում է իր տնտեսությունը մեքենաների ոգնությամբ, նա ավելի բարիքներ է ստանում, աննչան միջոցներ է վատնում և իրեն համար բարեկեցիկ կյանք ստեղծում։— գյուղատնտեսական մեքենան այլ կերպ ասած տնտեսության բարեկեցության աղբյուր է։ Այս դիտակցությամբ է, վոր պետք է ա-

ռաջնորդվել գյուղացիական մեքենաոգտագործման կամ նրանց տարածման ընկերություններ կազմակերպելիս ներկա շրջանում։

Մեքենաոգտագործման ընկերությունների կազմակերպման կամ զարգացման աշխատանքը սերտորեն կապված է նախ ինվենտարի անհրաժեշտ կոնտինգենտից, վոր չուներ կոոպերացիան 24—25 տարում և վորից՝ թեևակոխող 25—26 թվականին նա պիտի ունենա անկասկած, և յերկրորդ տեխնիքական այն ուժերից, վորանք պիտի պայմանավորեն մեքենաների ոգտագործման հնարավորությունը գյուղում։ Այս ասպարիզում նմանապես կոոպերացիան հենվելով պետական ընդհանուր ոգնության և ամենից առաջ Հողժողկոմատի ու Հայջրանտեսության վարչության վրա, կարող կը լինի տարածել իր ազդեցության սահմանները։ Հայգյուղկոոպի ցանցում վերոհիշյալ կոոպերատիվ ընկերութ. թիվը արդեն հասնում է 8-ի, սակայն մեծ հույսեր տածել դեպի նրանք՝ անկարելի յե՝ շնորհիվ ֆինանսական-տնտեսական նրանց ներկա խղճուկ կազմվածքի։ Միության առաջադրված խնդիրներից թերևս կարևորագույնն է տարրական, հասարակ տիպի կոոպերատիվների ուժեղացման (կոլլեկտիվների, մեքենայական, միլիորատիվ և այլն ընկերությունների) համար փոնդ կազմակերպելու հարցը։ Առանց այդ պահեստի ուժի թերևս վորոշ չափով դժվարանա նրանց աստղջ զարգացումը։

Մեր նպատակից դուրս է խոսել կոոպերատիվների առանձին տիպերի մասին՝ մենք դիտավորյալ կերպով կանգ առանք նրանց մի քանի ձևերի վրա, վորոնք խոշոր կովաններ են հանդիսանում գյուղատնտեսական կոոպերացիայի և ընդհանրապես գյուղի մեխանիզացիայի և չերտավորման ասպարիզում։ «Մենք պարտավոր ենք խստիվ հետևելու,—գրում է տնտեսագետներից մեկը *),—վորպեսզի ներկա վերելքի ժամանակ գյուղ մտնող մեքենաները բարձրացնեն խորիդդային տնտեսությունը՝ միջակների ու աղքատներին առաջին հերթին, և միայն այնուհետև դասակարգային մեր թշնամիների տնտեսությունը»։

Մենք կավելացնեինք, վոր կոոպերացիայի յուրաքանչյուր ձեռնարկություն գյուղում այդ դիտավորությունը պիտի ունենա։ Պարզ է, վոր գյուղատնտեսական կոոպերացիան իր հասարակական բովանդակությամբ անդամ ունի և պարտավոր է ունենալ իր դա-

*) Вл. Сарабьянов—„Кооперация в системе Советского хозяйства М. 1925 г.“

սակարգային քաղաքականություններ։ Խորհրդային կոոպերացիան ոչ մի կերպ էլ լինել չի կարող։ Նա հասարակական-մասսայական, շարժում է և վարպետ այդպիսին նրա առաջադիմությունի բանվոր դասակարգի հասարակա-տնտեսական և քաղաքական ձգտումներին։

Ի դեր և աշխատում տնտեսագետ-պրոֆեսոր Վ. Թ. Տոասմյանը**) «ցրել մի նախապաշարում, որ գոյություն ունի մեզ մոտ (նախկին Ռուսաստանում) կոոպերացիայի մասին։ Մեզանում կոոպերատիվ գործունեությունը հաճախ համարվում է քաղաքական գործունեության առանձին տեսակ։ Մինչդեռ Արևմուտքում վաղուց արդեն ընդունված է, որ դա անկուսակցական գործ է, և կոոպերատիվ շարժման մասնակցում են ամենից հակառակ հայացքների և կուսակցությունների պատկանող մարդիկ՝ Գերմանիայի ազգայնը, և վենդերացի մազնատը, սոցիալ-դեմոկրատական դեպուտատը, լիբերալը և բազիկալը»։

Գյուղատնտեսական կոոպերացիան չքավոր և միջակ գյուղացու տնտեսական կազմակերպությունն է՝ նախ և առաջ և նրան ոչ-սակավորողը։

Հարկավոր է աչքի առաջ ունենալ այս և ներկայիս չքավոր վոչ գյուղում կազմակերպվող կոոպերատիվի ընթացիկ աշխատանքներիցկավարությունը դնել կայուն հիմքերի վրա։

Հայկական գյուղը թե անցյալում (մինչ պատերազմ) և թե ներկայումս միատարր չի եղած և հաղիվ գտնվեն մեր սրերում հակառակը պնդող միամիտներ։ Մինչ պատերազմական գյուղը՝ սկսած 1880-ական թվականներից ապրել է ամբողջ մի պատմություն՝ նահապետական տնտեսությունը թեսթափ և լեղել ներքուժող կապիտալիզմի հարվածների առաջ, վոգային տնտեսությունը արագորեն ինչպես հողը, նույնպես և արտադրության այլ միջոցները (անասուն, ինվենտար) կենտրոնացրել և հողատեր—համփարեքների ձեռքին՝ ստեղծելով մեկ ծայրում գյուղական բուրժուազիա՝ մյուս բևեռում՝ անհող, սակավահող գյուղացի պրոլետարների՝ քայքայվող որդանիզմից գյուղությամբ պակվող՝ մի մասը, վորն անվերջ ու սիստեմատիկաբար վաղուցել և արդյունաբերական չրջանները*)։ Այնուհետև հեղափոխությունը փոնդելով սեփականատիրության հիմունքները վորոշ նիվելիրովելայի յենթարկեց գյուղի շերտերը, վորպեսզի կրկին՝ նորհիմ տնտեսական նոր քաղաքականության, ավելի մեծ թափով կատարվեր այդ շերտավորումը այսորվա գյուղում, ապրանքային տնտեսության ընդհանուր վերելքին։

Խորհրդային իշխանության հինգ տարվա գոյության միայն վերջին երկու տարվա ընթացքում սկսել ու զարգացել և կոոպերացիան մեր գյուղում։ Նա ներկայումս ժողովրդական տնտեսության ասպարեզում իր տեղն ու դիրքն ունի։ Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը նրան առաջադրել են տնտեսական քաղաքականության չրջանում խոշորագույն խնդիրներ։ գյուղատնտեսական կոոպերացիան իր սիստեմով ներկայումս կիրառում է ա) գյուղատնտեսության արտադրությունների կազմակերպված գարկավորումն, մատակարարումն ու սպառումը, բ) հիմնավորում, ամրապնդում և իր կոոպերատիվ ըջիջների միջոցով հաղորդավոր մասնը արտադրող գյուղացիների ցրված տնտեսությունների միավորումը, մեծավորումը (укрупнение), գ) յենթարկում և արտադրության և նրա վերամշակման առանձին ատիճան ներ հավաքական, կոլլեկտիվ, հանրային-միասնական կամքին դասակարգելով նրա մեջ սոցիալիստական-կոմունիստական արտադրության տարրական սկզբունքները։

Հարկավ, այս ասպարեզում շատ սիստեմներ կարող են աչքի ընկնել՝ նրանք անխուսափելի են։ չէ՞ վոր գյուղատնտեսության կոոպերացումը նեղկա 12-ից ավելի իր տեսակավորումով Նորություն և Հայաստանի համար, նա անցյալ չի ունեցել։ Մանր վարկի այն ընկերությունները, վորանք գոյություն ունեին մինչև հեղափոխությունը—կոոպերատիվներ չեին իրենց բովանդակությամբ։ Արտադրական կոոպերացիայի սիստեմատիկ աշխատանքներ մեզանում տարվել են սկսած 1924 թ. սկզբներից՝ երբ այդ աշխատանքների զեկավարությունը կենտրոնացվեց հատուկ մարմնի—կոոպերատիվ կենտրոնի ձեռքին։ Այն, ինչ ունենք այս ասպարեզում այսոր—լավ թե վատ, արդյունք և Խորհրդային իշխանության չրջանի, հետևանք և Խորհրդային քաղաքականության՝—առանց անցյալի կտակի։

Մի անգամայն տեղին և և թեսա կարելի է մի հավաքել երեկվա վարձ, արձանագրության տալ կոոպերացիայի Միության և նրա վոգի սիստեմի վերջին տարվա կոոպերատիվ—կազմակերպչական և ֆինանսա-տնտեսավարական ասպարեզներում ունեցած

*) 1 Съезд сел.-хоз. Закавк. Т. 1911 г «Кооп. в сел. хоз Запада» стр. 398.

*) Տես մեր գրքույկը „Բան շարժումը Հայաստանում 1903–07 թ.“

նվաճումներն ու միաժամանակ, հնարավորության սահմաններում, վերլուծել կոոպերացիայում առանձին տնտեսական գրուպպաների ունեցած տեղն ու ազդեցությունը:

Կոոպերացիան ամենաառաջնակարգ, յեթե վոչ միակ կուլտուրական և տնտեսավարական ձևն է Բանվորա-Գյուղացիական պետության ձեռքին գյուղացիական մասսաներին սոցիալիստական գծով կազմակերպելու, դաստիարակելու և դեկավարելու համար: Վո՞րոնք են նրա բաղադրիչ մասնիկները, ի՞նչ սոցիալական խմբավորումներից է կազմված—ասել է վո՞րն է կոոպերացիայի ներկա դասակարգային, ազգային սարուկտուրան և արդյո՞ք նա համապատասխանում է յերկրի ընդհանուր տնտեսա-դասակարգային սարուկտուրային և կուսակցության ու իշխանության քաղաքականության:

Կանգ առնենք այդ խնդիրների վրա:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Գյուղատնտեսական կոոպերացիայի վողջ սիստեմի կազմակերպչական պատկերը չափազանց խայտաբղետ է: Աշխատանքի վոչ մի ասպարեզում նախորոշված, նախամտածված յենթադրությունները, վերացական հանրացումները այնքան փոփոխության չեն յենթարկվում, վորքան կոոպերացիայի բնագավառում: Կոոպերացիան՝ իր զարգացման և խորացման շրջանում յերբեք չի սիրում քարացած սահմանափակ մոտեցումներ: Նա հասարակական-մասսայական շարժում է, «ազգաբնակչության կազմակերպելու միջոց» (Լենին), սերտորեն կապված կոոպերացվող իրավական անձի հասարակա-տնտեսական սուբյեկտիվ պայմաններից և հնարավորություններից: Կազմակերպող ուժը այստեղ վոչ թե դրսից է, այլ ներսից՝ ինքը կոոպերացվող անհատը՝ նրանց մասսան՝ փոխադարձ նրանց հավաքական կամքը: Այստեղիցել հետևում է, վոր կոոպերատիվ կենտրոնի կազմակերպչական ամբողջ աշխատանքների բազան ավյալ կազմակերպվող բնակչության տնտեսության գերակշռող սուբյեկտն է լինելու՝ նրա արտադրությունը, վորի զարգացման պրոցեսը սահեցնելու յե այն նյութական բաբիքները, վորին ձգտում է կոոպերացիայի յուրաքանչյուր անդամ: Այսպես չէ, սրինակ սպառողական կոոպերացիան—ամեն սպարեզում, բոլոր պայմաններում նա իր միատեսակ խնդիրներն ու պատկերը ունի: Մինչդեռ գյուղատնտեսական կոոպերացիայի

կազմակերպչական խնդիրները այնքան են բազմազան, վորքան ինքը՝ գյուղատնտեսությունը, գյուղացու տնտեսության սուբյեկտը: Ցեվ բոլոր այն կազմակերպչական ձևերը, վորոնք հաշվի չեն առնի կոոպերացվող յուրաքանչյուր տնտեսության կարիքը, նրա զարգացման հնարավոր հեռանկարը և նրան հասնելու գործնական՝ շոշափելի միջոցները՝ միայն բյուրոկրատիկ արժեք կունենան և ուրիշ վոչինչ:

Այստեղից չի հետևում այն, վոր գյուղատնտեսական կոոպերացիան պլանային աշխատանք չպիտի վարի, միանգամայն ընդհակառակը: Արտադրության յուրաքանչյուր բնագավառի կազմակերպման ռենտաբել բնույթը ինքնին պիտի առաջադրի նաև նրա կոոպերացման ուղին: Դա դեռևս բավական չէ. Միությունը պլանային խնդիրներ ունի՝ համաձայնեցնելու կազմակերպչորեն, ներդաշնակ զարգացման լիակատար հնարավորություններ ստեղծելու հեռավոր գյուղի կոոպերատիվի և Միության ու վարկավորող այլ օրգանների միջև՝ մի կողմից ու պետական տնտեսության ընդհանուր պահանջներին՝ մյուս կողմից: Հայգյուղկոոպը այս ասպարեզում հանդես է յեկել վոչ միայն սոսկ կազմակերպող, այլ և նրանց կազմակերպչորեն ու տնտեսապես ձևավորվողը: Թերևս կոոպերացիայում աշխատանքի վոչ մի բնագավառ այնքան հասարակ ու գյուրին չէ՝ վորքան կոոպերատիվի կազմակերպելը՝ իր ժամանակակից վուլգար ըմբռնողությամբ (վոր՝ դժբախտաբար դեռ ևս շարունակում է գոյություն ունենալ մեր գավառներում): Այդ կազմակերպումն այն ժամանակ և արդարացնում իրեն՝ յերբ նա ըղխում է տնտեսական նպատակահարմարությունից և անհրաժեշտությունից ու պահպանում է կամավոր աշխատակցության սկզբունքը:

Ընթացիկ տարվա ընթացքում «Հայգյուղկոոպ»-ի կազմակերպչական սկզբունքը յեղել է. «ավելի լավ է քիչ, բայց լավ». սակայն չենք կարող ասել, վոր իրագործված լինի նա լիովին. դա հասկանալի յե՝ շնորհիվ այն հեղափոխական անհամբերության, վորի մասին հիշատակեցինք սկզբում: Այնուամենայնիվ «Հայգյուղկոոպ»-ը գերադասել է մեկ առողջ կազմակերպությունը տասը թույլ կոոպերատիվից՝ առաջնորդվելով միանգամայն տարբերական այն սկզբունքից, թե առողջ կոոպերատիվի գոյությունն առհավատչյա յե հասարակական իրախուսանքի, մինչդեռ թույլ կոոպերատիվը՝ վարկաբեկում է

կոոպերացիայի սկզբունքը։ Վոչ վոքի համար գաղտնիք չէ, վոր գյուղատնտեսական կոոպերացիայի սկզբնական շրջանում գյուղատնտեսական վարկը ակնհայտնի դեր ունի կատարելու և ամենանշանակալի ֆինանսական սուղ միջոցները հանդիսացել են նմանապես կասեցնող հանգամանք։ այս է գաղտնիքն այն բանի, վոր «Հայգյուղկոոպ»-ը «չատ կոոպերատիվներ չի կազմակերպում», կամ իր միջոցները քրիստոնյական հավասարությամբ չի բաժանել ըստ գավառների։ Մի-ության համար, առանձնապես վարկավորման գործում ամենամեծ չափանիշը կոոպերատիվ կազմակերպության առողջ և սրինակելի աշխատանքն է յեղել ու պիտի լինի այսուհետ։

Սա դեռ չի նշանակում, վոր «Հայգյուղկոոպ»-ը կազմակերպչական կամ վարկավորման գործում պետք է թերանա, բայրովին վոչ։ Նա իր ուժերը պիտի կենտրոնացնի գրված դիրքերի ամրապնդման, կոոպերատիվների կազմակերպչական-հրահանգչական և անտեսավարական դրությունն ամրացնելու։ Նա այդպես և վարվել է այս ուղղությամբ ունի կատարյալ հաջողություն։

Ահա մի քանի թվեր՝ (տես ադյուսակ համար 1)։

Այնուհետև առաջ տեսակավորումները գրեթե ամբողջովին պարտադրում են յերկրի անտեսության կարևոր ճյուղերը։ այդ թվին հոկտեմբերի ընթացքում ավարտում են մեքենագործարանային կամ մեքենայական ընկերություններ թվով 8-ը և անձնագործական՝ 2, այնպես վոր, փաստորեն «Հայգյուղկոոպ»-ը 13 տիպի կոոպերատիվներ ունի իր ցանցի մեջ՝ թվով առ 1-ն նոյեմբերի՝ 156։ Մեկ տարվա ընթացքում կոոպերատիվ ցանցը գրեթե կրկնապատկվել է։

Վերոհիշյալ 147 կոոպերատիվները մշակում են առ 1-ն հոկտեմբերի 19.153 անտեսություն և առ 1-ն նոյեմբերի մոտ 20 հազար*) գյուղացիական անտեսություններ։

Կոոպերացման տեսակետից ըստ գավառների

Ադյուսակ № 2

ԳԱՎԱՌՆԵՐ	Առ 1-ն հոկտեմ. 1924 թ.	Առ 1-ն հունվ. 1925 թ.	Առ 1-ն ապրիլի 1925 թ.	Առ 1-ն հուլիսի 1925 թ.	Առ 1-ն հոկտեմ. 1925 թ.	Զարգացման տոկոսը
1. Յեր-ևանի	8,5	9,3	11,3	13,2	14,8	174,1
2. Լենինականի	2,9	3,6	5,8	7,2	9,0	310,3
3. Եջմիածնի	7,3	7,5	9,5	11,2	11,2	153,4
4. Բայազետի	1,7	2,0	2,6	8,2	9,0	529,4
5. Լոռու-Փամբակի	14,5	16,1	20,8	22,9	24,3	167,6
6. Դիլիջանի	2,4	4,3	8,9	12,6	14,0	583,3
7. Զանգեզուրի	2,0	2,3	4,5	5,0	5,1	255,0
8. Դարալագյազի	1,2	2,6	2,7	6,6	6,6	550,0
9. Մեղրիի	16,6	20,8	23,2	28,5	30,3	183,1
Հայաստանում՝	5,9	6,9	9,3	11,8	12,85	216,9
Զարգաց. տոկոսը	100	116,9	158,2	200,0	216,9	—

*) Մենք հիշատակում ենք սոսկ նոյեմ. առ 1-ն նոյեմբերի ավյալներն այն պատճառով, քանի վոր առ 1-ն հոկտեմբերի տար. ընկերություններ տեղեկություններ չեն ներկայացնելու պատճառով ադյուսակի մեջ չեն մտել։

Հ. Ս. Ֆ. Հ. Գ. Ա. Գրադարան
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կոոպերատիվների զարգացման դինամիկան

Ադյուսակ № 1.

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Առ 1-ն հոկտ. 1924 թ.	Առ 1-ն հուն. 1925 թ.	Առ 1-ն ապր. 1925 թ.	Առ 1-ն Մա հուլ. 25 թ.	Առ 1-ն հոկտ. 25 թ.	Զարգացման կոսը
1. Կաթնատնտ. արտ.	33	40	66	69	71	215,4
2. Գյուղվարկ. ընկ.	16	17	23	28	30	187,5
3 Գյուղատնտ. խանութ ընկ.	8	11	13	14	15	185,5
4. Այգեգործ. ընկ.	8	6	9	9	9	112,5
5. Մեղվաբուծ. »	9	10	15	16	16	177,8
6. Ծխախոտագործ. ընկ.	1	1	2	2	2	200,0
7. Շերամապահ. »	1	1	1	1	1	—
8. Բամբակագործ. »	—	1	1	—	—	—
9. Մելոբատիվ »	—	—	1	—	—	—
10. Խաշխաշագործ. »	—	—	—	2	2	—
11. Արհեստագործ. »	—	—	—	1	1	—
Ընդամենը՝	76	87	131	142	147	—
Տոկոսով	100	114,0	172,0	187,0	193,0	

Միջին թվով կոոպերատիվին ընկնում է անդամ

Աղյուսակ № 3.

Կոոպերատիվների տեսակները	Դեռ 1-ն հոկտ. 1924 թ.	Սեռ 1-ն հուն. 1925 թ.	Սեռ 1-ն հուլ. 1925 թ.	Սեռ 1-ն հոկտ. 1925 թ.
1. Կաթնատնտ. արտ. . . .	68,3	64,9	73,4	73,9
2. Գյուղվարկ. ընկ.	327,5	369,9	369,0	383,0
3. Գյուղատնտ. խ. ընկ. . .	28,1	27,2	33,7	33,9
4. Մեղվաբուծ. » . .	70,9	59,1	43,2	43,3
5. Ծխախոտագործ. » . .	25,0	25,0	87,0	91,5
6. Շերամապահ. » .	10,0	10,1	28,0	28,0
7. Աշխատավոր. » . .	—	—	12,5	6,6
8. Տնայնագործ. » . .	—	—	35,0	35,0
Հայաստանում՝	117,4	120,5	124,8	129,8
« տոկոս . .	100	102,64	106,30	110,56

Կոոպերացումը՝ հավասար ուժով չի ընթացել բոլոր գավառներում, սակայն առանձին-առանձին վերցրած մեկ տարվա ընթացքում զարգացման թափն արտահայտվել է 129 տոկոսից սկսած մինչև 583,3 տոկոս:

Գյուղատնտեսական կոոպերացիայի շուրջն առ 1-ն հոկտեմբերի 25 թ. հավաքված է Հայաստանի տնտեսությունների 12,85 տոկոսը, այդ թիվն առ 1-ն նոյեմբերի տվյալների համաձայն արտահայտվում է 14 տոկոսով: Արժանի յե նկատողություն նաև այն, որ կոոպերացման պրոցեսն ավելի բուռն բնավորություն է կրել Դիլիջանի, Լենինականի, Գարբաղյաղի գավառներում, ուր անցյալ տարվա սկզբներում գրեթե վոչինչ չկար: Բայց և այնպես, բուռ կոոպերացման տոկոսի գավառները դասավորվում են՝ Մեղրի (30,3), Լոռի-Փամբակ (24,3), Ցերեան (14,8), Դիլիջան (14,0), Եջմիածին (11,2) և այլն (սրխալ չեր լինի, յեթե ասեյինք, որ կոոպերացման ասպիճանայույցը սերտորեն կապված է գավառի կուլտուրական մակարդակի հետ):

Հիշատակության արժանի յե այստեղ նաև այն, որ միավորների թվական զարգացման հետ (193,0) ավելի զարգացել է անդամների թիվը (216,9), որ համարյա թե կոոպերատիվների խոշորացման և դյուղացիության սիստեմատիկ անդամագրության:

Կոոպերատիվների փաստական խոշորացումն անկասկած չափելի մեծություն պիտի լիներ, քան այն, ինչ պարզ ցույց է տալիս աղյուսակը (համար 3). դա պիտի վերագրել նրան, որ ստորև բերված թվերից դուրս է վտարված լիկվիդացիա յեղած կոոպերատիվներին վերաբերող թվերը:

Կոոպերատիվի առողջ և ուժեղ լինելու հանգամանքը պայմանավորված է նախ և առաջ նրա սեփական միջոցների դումարից.

Գյուղատնտեսական կոոպերացիայում սեփական միջոցները կազմված են մեծ մասամբ փայադրամագլխից, մուտքի վճարից և հիմնական դրամագլխից: Հիմնական դրամագլուխը տեղավորված է կայքում և նա, դժբախտաբար, առայժմ լրիվ հաշվարկման չի յենթարկված շատ կոոպերատիվներում: Փայադրամագլուխը չափազանց խայտաբղետ պատկեր և ներկայացնում: Բավական է հիշել, որ այստեղ ամպլիտուդան չարժվում է 30 կոպեկից մինչև 50 ռուբլի և դա հասկանալի յե, քանի որ փայավճարը նշանակված է վոչ թե տնտեսությունից, այլ նրա այն որյեկտից, որը հանդիսանում նրա կոոպերացված ճյուղի հիմքը. այսպես, օրինակ՝ մեղվաբուծական ընկերություններում փայավճարը հաշվում է փեթակից և պրոգրեսիվ զարգանում ըստ նրա քանակի: Նույնը կաթնարտադրներում՝ փայավճարը գանձվում է կթան կովից՝ սկսած 50 կոպեկից մինչև 5 ռուբլի՝ նայած արտելի հնարավորություններին: Չնայած փայավճարների վորոշման հարցում Միությունը ամեն և պերիֆերային մաքսիմալ ճեռներեցություն, սակայն նա վորոշ սահմանների մեջ՝ այնուամենայնիվ՝ պահպանել է: Հարկավոր կը լինի անկասկած՝ հետագայում կոոպերացիայի ամեն առանձին տիպի համար ֆիկսացիայի յենթարկել վորոշ չափ, կամ նրա մինիմումն ու մաքսիմումը:

Փայավճարի մեջին դումարը կազմում է՝

1. Կաթնատնտեսական արտել (կթան կովից) 2 ռուբլի,

2. Գյուղվարկային ընկերութ. (անտեսությունից) 10 ռուբ.,
3. Գյուղատնտ. խառն ընկերութ. (անտեսությունից) 5 »
4. Այգեգործական ընկերութ. (դեսյատինից) 10 »
5. Մեղվաբուծական ընկերութ. (փեթակից) 50 կոպեկ,
6. Ծխախոտագործական ընկերութ. (դեսյատինից) 15 ռուբ.
7. Մյուս տեսակի (անտեսությունից) 10 »

Կոոպերատիվ միջոցների ուժեղացման տեսակետից այս ապատությունը պախարակելի չէ, յեթե նա դանձվի վարչ. ժամանակաշրջանում՝ համաձայն անտեսության կարգության—այսինքն՝ այնպես, ինչպես մինչև այժմ կիրառել է «Հայգյուղկոոպ»-ը:

Անդամավճարը շնչին գումար է և նրա ամպլիտուդան չատ փոքր՝ 50 կոպեկից 1 ռուբլի:

Սեփական միջոցների կուտակումը՝ կոոպերատիվի անդամների կոոպերատիվ գիտակցության չափանիշն է. արտադրողական կոոպերատիվներում մեծ մասամբ 100 տոկոսով նոր դանձված է, իսկ ունիվերսալ ընկերություններում դանձված է միջին թվով մոտ 65 տոկոսը:

Կոոպերատիվների սեփական միջոցների շարժումը

Աղյուսակ № 4

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Առ 1/x 1924 թ.	Առ 1/IV 1925 թ.	Առ 1/x 1925 թ.	Զարգացման % հարաբեր. առ 1/x 1924 թ.
1. Կաթնատնտ. արտ.	24.481	44.750	54.584	222.56
2. Գյուղվարկ. ընկ.	55.651	85.572	119.703	215,08
3. Գյուղատնտ. խ. »	5.833	10.764	34.746	595,68
4. Այգեգործ. »	11.260	12.568	13.108	116,40
5. Մեղվաբուծ. »	5.763	4.867	4.805	91.20
6. Ծխախոտագործ. »	735	1.196	3.192	434,29
7. Շերամապահական ընկ.	110	308	308	280,0
8. Ձկնաբուծական »	—	—	385	—
9. Աշխատավորական »	—	—	120	—
Հայաստանում՝	103.337	160.425	230.948	223,49
» տոկ.	100	155,24	223,49	

Պետք է նշել, որ միջին թվով յուրաքանչյուր անդամին հասնող մոտ 10 ռուբլին՝ մի չնչաչափ գումար է, որը փոխանակ շրջանառության մեջ մտնելու, չդիմացավ և մեծ մասամբ ձեռնարկությունների, գործարանների (մեքենայի ինվենտարի) մեջ. այնպես որ՝ փաստորեն 230.000-ի մի շնչին դառն է, որը չարժվում է առօրյա անտեսավարական նրանց գործարքներում: Թվերը ցույց են տալիս սեփական միջոցների արագ աճումն՝ որը հետևանք է լեցել շրջանառական միջոցների բացակայության և Միության կողմից լեցած հրահանգների: Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերացիան այս տեսակետից առաջին տեղն է գրավում ոչ միայն Անդրկովկասում, այլ և Միության մեջ: Հարկավոր է այդ հաջողությունը հիմնավորապես ամրապնդել՝ դանձելով այն ամբողջ 100 տոկոսով:

ԿԵՐԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՑԵՎ ՆՐԱ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԸ

Գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցում առաջնակարգ տեղ է գրավում կաթնատնտեսական կոոպերացիան: Չը նայած տարածված թյուր կարծիքի, նա բոլորովին էլ հեռավոր անցյալ չունի: Մենք հետու յենք մեկ կոոպերատիվի գոյությամբ ամբողջ սիստեմի մասին խոսելուց: Կաթնատնտեսական կոոպերացիան դարպես կոոպերացման մասսայական շարժում, սկսել և զարգացել է 1924 թ. սկզբներից «Հայգյուղկոոպ»-ի անմիջական ղեկավարության ներքո:

Լոռի-Փամբակի գավառական մի խորհրդակցության ընթացքում ընկերներից մեկը հեգնանքով թե չհասկանալով, կաթնատնտեսական կոոպերացիայի զարգացման ու կազմակերպման ներկայի ամբողջ աշխատանքը վերագրեց բարոն Կուչենբախի*) յեռանդին: Մենք հարկ չունենք ոչ վրդովելու Կուչենբախի պերսոնը և ոչ էլ նրա սիրահարներին նկատողության տակ առնել: Կուչենբախի գործարանները ներկայում՝ հատակում են գյուղագիության, իսկ նրա մատնավոր—կապիտալիստական ձեռնարկի տեղ, գարգանում և արտելը՝ կոոպերատիվը: Թվում է, որը այստեղ արխիբծախնդիրն անդամալեռք և որը նկատի թեկուզ հեռավոր տարբերություն Կուչենբախյան «կոոպերացիայի» և ներկայիս արտելների մեջ: Կրկնում ենք, որը Հայաստանում կաթնատնտեսական կոոպերացիան հեռավոր անցյալ չունի և այն՝ ինչ-

*) Բարոն Կուչենբախ մատնավոր խոշոր սեփականատեր է յեղել Լոռում ս նեցել և շվեյցարական պանրի գործարաններ.

ներկայումս կա՝ մեր սեփականն է, խորհրդային ուժերով կազմակերպված։

Ըստ «Հայաստանի Կոոպերացիայի» տվյալների (համար 1—4՝ 1924 թ. հունվարին մեղանում կային վեց կաթնատնտեսական արտելներ, 147 անտեսությամբ. առ 1-ն մարտի նրանց թիվը հասնում է 15-ի և 600 անտեսության. (տես «Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերացիա» համար 1) և վերջապես առ 1-ն հոկտեմբերի 1924 թ. 33 կոոպերատիվների վերջին մեկ տարվա ընթացքում սրանց թիվը հասել է 71-ի ընդամենը 5,325 անտեսությամբ, վոր նշանակում է մի ջին թվով յուրաքանչյուր կոոպերատիվին դալիս է 75 անդամ-անտեսություն։

Կաթնատնտեսական կոոպերացիայում առ 1-ն հոկտեմբերի կար 8,604 կթան կով, իսկ ներկայումս հաշվում է 16,202 կով կամ մոտ յերկու անդամ ավել։

Կաթնատնտեսությունը (անասնապահությունը) Հայաստանի գյուղացու տնտեսության մեջ ամենառաջին տեղն է գրավում ու միանգամայն տարբերնակ չե, վոր այս տնտեսության կոոպերացումը զարգանում է Հայաստանում արագ, մանավանդ վոր նրան նպաստող կարևորագույն խթանը՝ Ալպյան մարգագետնի և արոտատեղիների տարածությունը ընձեռնում է այդ։

1925 թ. գարնանամուտին «Հայգյուղկոոպ»-ի Խորհրդի 2-րդ նստաշրջանի աշխատանքների վարման իր ճառում ընկ. Լուկաշինը մատնանշեց այն գժվարին խնդիրը, վորին պիտի ձեռնամուխ լիներ կոոպերացիայի միությունը—դա կաթնատնտեսական կոոպերացիայի Հայաստանի բոլոր գավառներում տարածելու, կազմակերպելու հարցն էր։ Գյուղացու բարեկեցության արդյունավետ, ճիշտ և քիչ աշխատանքներ պահանջող տնտեսությունը դա յե։

Մի տարվա ընթացքում՝ հատատորեն կարելի յե պնդել, վոր ոչ երբվականին զգալի գործ է կատարված այդ ուղղությամբ. յեթե առ 1-ն հոկտեմբերի 1924 թ. 23 արտելներից 31-ը (94 տոկոսը) Լոռի-Փամբակի գավառին էր ընկնում, ապա այժմ 71 արտելները*) ըստ գավառների տորբաբաժանվում են.

1. Լոռի-Փամբակի	— 45	կոոպ.	4,073	տնտես. կամ	63%
2. Լենինականի	— 8	»	426	»	
3. Նոր-Բայազետի	— 4	»	164	»	37%
4. Դիլիջան	— 9	»	446	»	
5. Մյուս գավառ.	— 5	»	286	»	
	—71	»	5,325	»	

*) 71 արտելներից մի քանիսը ընթացիկ տարվա վերջերին կազմակերպված լինելու և այլ պատճառներով—չեն աշխատում։

Այլ կերպ ասած կոոպերատիվների 63 տոկոսը Լոռի-Փամբակում, իսկ 33 տոկոսը մյուս գավառներում։

Կազմակերպչական ծավալման հետ զուգընթաց զարգացել և վոչ միայն կոոպերատիվների սեփական միջոցները (տես աղյուսակ № 5.

Աղյուսակ № 5.

Առաջարկված յեղ վերամշակած կարգադրություններ

ԳԱՎԱՌՆԵՐ	1923—1924 թ. թ.								1924—1925 թ. թ.							
	Վերամշակված 4 *)								Վերամշակված 4							
	Քոսկ դ բոհնատ	Ինկոս դ	Ինվոֆ	Ինգոս	Եղաց	Ինոս	Ինոս	Ինոս	Քոսկ դ բոհնատ	Ինոս դ	Ինվոֆ	Ինգոս	Եղաց	Ինոս	Ինոս	Ինոս
Ղ.-Փամբակ **) .	274105	16876	6360	2543	3140	673855	466881	12239	430068	12239	27299	4584	5334	942964	30627	5615	6313	1024639
Լենինական . . .	—	—	—	—	—	—	—	—	29669	—	2419	861	848	65307				
Դիլիջան . . .	—	—	—	—	—	—	—	—	5489	—	638	42	60	11062				
Ն.-Բայազետ . .	—	—	—	—	—	—	—	—	3155	—	171	128	71	5306				
	274105	16876	6360	2543	3140	673855	466881	12239	430068	12239	30627	5615	6313	1024639				

*) Արտադրություն, արտիքը բնդունել մեր շինարարական տարեվերջ դեպքերում—նրա դեպքերում 14 ս., յուղ—32 ս., հնդկ—5 ս.

**) 23 24 թ. Լոռի-Փամբակի գավառի 21 տարրի պրոդուկցիան և մեջ բերված, իսկ 1924—25 թ.—37-ի. Լենինականում—6-ի, Դիլիջանում—3-ի և Բայազետում—3-ի։

ալակ համար 4), այլ և նրանց արտադրությունը:

Դա ամենից պարզ հետևում է 23—24 և 24—25 թվականների արտադրած և վերամշակած կաթնամթերքների քանակի և նրանց արժեքի բաղդատությունից:

Սրանից պարզ երևում է 24–25 տ. յերկու խոշոր հատատջադիմություններ. մեկ վոր բացի Լոռուց՝ արտահանության ասպարեզում Լենինականի, Դիլիջանի և Բայազետի գյուղացին դուրս և բերել իր վերամշակված արտադրանքը, յերկրորդ, վոր մեկ տարվա ընթացքում կաթնատնտեսական արդյունաբերությունը բարձրացել է մոտ 100 տոկոսով՝ հարմարվելով միաժամանակ իր արտադրության վորակով չուկայի պահանջներին, հասցնելով շրջանառության գումարը 1·000·000–ից ավել:

Կաթնատնտեսական կոոպերացիայի նվաճումները չափազանց խոշոր են, սակայն վերածելով նա յուրաքանչյուր կովի և դիտելով յերկու տարվա առաջադիմությունը՝ հանգում ենք վոչ բավարար յեզրակացության. կովի կաթնատվության ասպիճանը շատ է պակաս մեզ մոտ. նա ավելի ակնարկ է առանձին շրջանների ու արտելների նկատմամբ. մեկ կովի կաթի քանակը սկսած 19 փթից (Ն. Բայազետ) հասնում է մինչև 65 փթի (Լոռի). ի՞նչին վերագրել սա.—ա) գլխավորապես արհեստական կերի և բ) ցեղային անասունների ու բուղաների կատարյալ բացակայության***):

Կաթնարտադրների պրոդուկցիայի բացիոնալ վերամշակման ու ուղարկման խնդրի հետ կապված է նաև նրա վորակի պրոբլեմը: Այժմ, յերբ ը. Տրոցկին սոցիալիզմին հասնելու հետ կապում է արտադրության վորակը՝ իսկապես մեզ վիճակված է այս ուղղությամբ այրուբենից սկսել: Այս ասպարեզում մինչպատերազմյան նորմայից դեռ շատ հեռու յենք: (Մենք այստեղ հարևանցիորեն կուզեինք չոշափել առանձին մի քանի խնդիրներ՝ մանրամասնության մեջ չմտնելով): Վերջին տարիների պտղի արտադրության վորակը մասնագետների կարծիքով յեթե համեմատելու լինենք մինչպատերազմյանի հետ՝ կը տեսնենք մոտավորապես հետևյալը՝

Շվեցարական պտղի մինչպատերազմյան վորակը			—	100%
»	»	1922—1923 թ.	» —	25%
»	»	1923—1924 թ.	» —	35%
»	»	1924—1925 թ.	» —	67%

*) Լոռու շրջանի կաթնարտադրների միջին թվով 70-80 կովին հասնում է մեկ բուղա, մինչդեռ նրա ունակությունները մաքսիմում հազիվ բավարարեն 30-40 կովի:

Համեմատած անցյալ տարվա հետ, այս տարի մոտ 50 տոկոսով վորակապես բարձրացրած է, սակայն մինչպատերազմյանից դեռ պակաս.—Այս առաջարկում Միությանը վրա դրված են վորոշակի խնդիրներ և պարտականություններ, նա այդ կարող է իրագործել յերկու դծով:

Առաջին.—արտադրության վորակը բարձրացնելու համար դեռաք է վերանորոգել հերկա գործարանների կահավորումն ու ապրանքավորումն: Մեր պանրագործարանները, նրանց նկուղները վոչ մի քննադատության չեն դիմանում: Արտելները իրենց սեփական ուժերով անմիջապես նա վերանորոգել—անկարող են. հարկավոր է յերկարատև վարկ, յեթե ուզում ենք Հայաստանի շվեցարական պանրի արդյունաբերությունը հաստատ հիմքերի վրա դնել. այդպիսի վարկ Միությունը պարտավոր է հայթայթել:

Յերկրորդ.—Դա վարպետների հարցն է. ով ծանոթ է առանձնապես շվեցարական պանրագործության պատմության հետ, գիտե, վոր այսորվա «վարպետները» մինչպատերազմյան վարպետները չեն նրանք չկան, վոչնչացել են մեր իրականությունից: Լոռուն ամեն մի գյուղացի իրեն «վարպետ է» համարում և ինչ խոսք՝ վճռացնում հասարակական կարծությունը:

Որ առաջ պետք է այստեղ «սիրող–վարպետների» վորակը ստուգին հերթին բարձրացնել՝ յեթե չհապրպոված ենք այդ արտադրության զարգացմամբ և վորակի բարձրացման խնդրով: Այս ասպարեզում հարկավոր է, անկասկած, պետական աջակցություն, առանց վորի հազիվ Միությանը հաջողվի հարմածային այդ խնդրի լուծումը:

Իր առաջիկա աշխատանքների ընթացքում «Հայդյուզկոոպ»–ը յերբեք աչքաթող չպիտի անի հերթական այդ խնդիրները, վորոնք կախված է նախ և առաջ այդ արդյունաբերության և կոոպերացված անտեսությունների ամբողջ բախտը: Սոցիալիզմին կարելի յե հասնել մասսայական կոոպերացման ու արտադրության վորակի բարձրացումը:

Գյուղի վոչ խավերն են զբաղվում կաթնատնտեսական կոոպերացիայում. այս հարցին պատասխանելու համար մենք թվերը պիտի զերազանենք ինտերեսով և սիրալ յենթադրություններից:

Կաթնատնտեսական շրջանների կոոպերացված 5298 անտեսություններից (կամ 99.9 տոկոսից) ստուգման և քննության է յենթարկվել

թարկված 2,834 տնտեսություն կամ 53 տոկոս: Մեր հետագա ընդհանրացումները, նշանակում է, հիմնված են կոոպերացված կաթնատնտեսության կեսից ավելի տնտեսությունների հետազոտման վրա:

Ահա այդ թվերը.

Տնտեսությունների ստորաբաժանումը ըստ կովերի թվի տոկոսներով

Աղյուսակ № 6

ԳԱՎԱՌՆԵՐ	Ամենաքիչ կաթ տվող կովերի թվի տոկոսը	Ոչ մի կով չունեցող տնտեսություններ	1	2	3	4	5	6	7	8	9	10 և ավելի
1. Լ.-Փամբակի Տնտեսություն.	2181	—	21,69	25,45	17,38	11,19	6,28	3,76	2,11	2,70	1,65	6,60
Նրանց կով.	—	—	5,88	13,78	14,10	12,12	8,51	6,11	4,00	5,86	4,02	25,62
2. Լենինական Տնտեսություն.	226	0,44	54,45	27,43	8,85	5,75	0,89	1,77	0,44	—	—	—
Նրանց կով.	—	—	30,75	31,00	15,00	13,00	2,50	6,00	1,25	—	—	—
3. Դիլիջան Տնտեսություն.	199	—	60,80	25,63	9,55	3,02	1,00	—	—	—	—	—
Նրանց կով.	—	—	38,54	32,48	18,15	7,64	3,19	—	—	—	—	—
4. Ն.-Բայազետ Տնտեսություն.	66	12,12	46,95	25,76	12,12	1,52	1,52	—	—	—	—	—
Նրանց կով.	—	—	31,63	34,70	24,49	4,08	5,10	—	—	—	—	—
5. Զանգեզուր Տնտեսություն.	162	1,85	38,27	24,69	16,05	12,35	3,70	2,47	—	0,62	—	—
Նրանց կով.	—	—	17,13	22,10	21,52	22,10	8,30	6,63	—	2,21	—	—
Ընդամենը տնտես.	—	1,34	28,58	25,58	15,95	10,02	5,22	3,18	1,66	2,11	1,27	5,09
Նրանց կովերը	—	—	8,78	15,71	14,69	12,31	8,02	5,85	3,56	5,29	3,51	22,37

Անհրաժեշտ է այստեղ, նախ քան խմբերի վերածելը—կանխել մի հանգամանք, որը անտես առնելու դեպքում՝ ճիշտ յեզրակացության հանգել չենք կարող: Արդյո՞ք բոլոր շրջանների նկատմամբ միևնույն նորման կարելի յե ընդունել տնտեսության բնութագրելու դեպքում.—ոչ. որինակով պարզենք մեր միտքը. Վաղանցովկայի մի տնտեսությունը, որը ունի յերեք կով՝ Ախտալի նույնքան կով ունեցող տնտեսության նկատմամբ պետք է ընդունել ավել կարիքավոր, քան յերկրորդը:

Առաջի զոնայում տնտեսության հիմնական ճյուղը կաթնատնտեսությունն է, նա կազմում է բյուջեյի յեկամտի խոշոր ապրյուրը *), յերկրորդ դեպքում կաթնատնտեսության զուգընթաց՝ թերևս ավելի զարգացած է հացաբույսերի մշակությը: Այստեղ գյուղացու բյուջեյի յեկամտի խոշոր տոկոսը տնտեսության այլ ճյուղերից է**): Ահա տնտեսական այս մոմենտներից յելնելով պետք է ընդունել առնվազն Լոռի-Փամբակի շրջանի և մյուս գավառների ըստ կովերի գյուղական դրությունների մեջ մի կովի (մինչև 2) տարբերություն: Մյուս գավառներում մինչև յերկու կով ունեցող տնտեսությունը—աղքատ են համարում՝ չնորհիվ կովերից ստացվող արդյունքի և աղքատ տնտեսության բյուջեյի. միջակ 3 կովից մինչև 5-ը և ուժեղ (կուլակ) դրանից բարձրը: Սա մեկ. յերկրորդն ըստ կովատիրության յեթե տնտեսություն-

Գյուղացիական զրուպաները կոոպերացիայում ըստ տնտեսությունների յեվ ունեցած կովերի թվի տոկոսներով

Աղյուսակ № 7.

ԳԱՎԱՌՆԵՐ	Աղքատ		Միջակ		Ուժեղ	
	Տնտես	Կովեր	Տնտես	Կովեր	Տնտես	Կովեր.
Լոռի-Փամբակ	65,71	33,76	21,23	26,74	13,06	39,50
Լենինական	82,32	61,75	15,49	30,50	2,21	7,25
Դիլիջան	86,43	71,02	13,57	28,98	—	—
Ն.-Բայազետ	84,84	66,33	15,16	33,67	—	—
Զանգեզուր	64,81	39,23	32,10	51,92	3,09	8,84
Ընդամենը՝	71,45	39,18	18,42	26,18	10,13	34,64

*) Материалы по изуч. быта Гос. Крест. Борчалинс уезда, т. 8-ой 1887 г.

**) См. матер. т.4-ой исследование А. В. Парвицкого.

ՆԵՐԸ վերոհիշյալ նկատողությամբ դասավորենք՝ կը տեսնենք չանեար ու ագքառ, միջակ և ուժեղ (կուրակ) դրուպպաները՝ ըստ իրենց տնտեսության և ունեցած կովերի տակոսային հարաբերության։ (Տես ապյուսակ համար 7)։

Թվում է թե հարկ չկա առանձին կոմենտարիաներ։ կարելի է միայն արձանագրել, որ «ուժեղ» տնտեսությունների թվի մեջ Լոռի–Փամբակի գավառում 10–ից բարձր կովատերերի թիվը 6.60, իսկ կովերի թիվը՝ 25.62 է, այսինքն՝ ավելի պարզորոշ՝ դա այն տնտեսություններն են, որոնք իրենց դիրքով արդեն հնարավորություն ունին փոշ միայն տնտեսելու, այլև շահագործելու մանր տնտեսություններին։ Ցերկրորդ՝ մի գլուխ ապացույցն այն է, որ ատաղեց Զանգեզուրի ուժեղ տնտեսությունները՝ պետք և վերագրել Բաղարջայի տնատնապահական ապրիոին՝ թեև այդպես էլ, ինչպես տեսնում ենք համար 6 ապյուսակից, 8–ից ավելի կով ունեցողները բոլորովին չկան։ Հարկավ, մենք նկատող չերաստվորման հանդեպ աչք չպիտի գոցենք։ Ապյուսակից պարզ յերևում է, որինակ, Լոռու նկատմամբ, որ տնտեսությունների 65.7 տոկոսը—ագքառներն ունեն ընդամենը կովերի 33.7 տոկոսը։ Մինչդեռ հետագա յերկու դրուպան միասին՝ (34.3 տոկոսը) բաժանված է կովերի 66.24 տոկոսով։ դեռ ավելին՝ յերկրորդ դրուպան (միջակ) իր հերթին նույնպես վերջինի նկատմամբ խղճուկ դիրք ունի։ ասյանց յերկու յերրորդ տնտեսությունը բաժանված է 50 տոկոս պակաս, քան վերջին դրուպան՝ մեկ յերրորդը։

Հնարավոր է ներկա ապրանքային տնտեսության շրջանում կովերի արագ կոնցենտրացիան յերրորդ դրուպայի ձեռքին։ մի։ ջին դրուպան իրենից մի առանձին բան չի ներկայացնում։ մեկ բեռնում կենտրոնացել են ագքառ տնտեսությունները, մյուս բեռում՝ կովերը։ Այսուհետև էլ հարկավոր է վորոշ յեզրակացություն հանել տոորյա աշխատանքների գեկավարության բնթացքին և այն ուղղությամբ, վորպեսզի բոլոր մեր ոգնության միջոցները պահպանեն առաջին դրուպաների տնտեսական գերակշռությունը հանդեպ վերջինի։

Վերև բերված ապյուսակը, մերկացնելով դրուպաների տնտեսական ուժը (ըստ կովերի) կոոպերացիայում չի տալիս մեզ պարզ պատկերացում նրանց ունեցած ազդեցության մասին։ Այժմ հարկավոր է մեզ պարզել յուրաքանչյուր դրուպայի ու-

Ամանորյան Ալեքսանդրի Ալեքսանդրի նոր տիպա

նեցած մասնակցության աստիճանը–կոյեֆիցիենտը*)։ Հետևյալ ապյուսակը տալիս է այդ պատկերը։ Ի՞նչ են տեսնում ապյուսակը։ —

Ամենամեծ դիրքը գրավում է Ալեքսանդրի դրուպան։ Ինչպես տեսնում ենք, նրանց մասնակցությունը կոոպերացիայում ամենամեծն է։ Հետևապես նրանց դիրքը կոոպերացիայում ամենամեծն է։ Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդրի դրուպան ունի 4 յուրաքանչյուր գյուղում 4 կով։ Լոռի և Զանգեզուրի դրուպաներում դեռ նրանց դիրքը ավելի ցածր է

առաց կովի տնտեսությունների մասնակցությունը (0,91–ից— 0,3 անչան և գրեթե։ Մի կովատերի ամենաբարձր մասնակցության աստիճանն ընկնում է Դիլիջանին (2,66) և ամենանվազը՝ Լոռ–Փամբակին (0,93)։ սկսած 2 կովատերերից։ բացի Լոռ–Փամբակից՝ մյուս շրջաններում հետզհետե իջնում է մինչև զերոյի, վորոշ զիկզակներով։ Ինչ վերաբերում է Լոռուն, այստեղ նկատվում է կոյեֆիցիենտի հարաճյուն վերելք։ Սկսած 0,04–ից նա բարձրանում է մինչև 1,70 (3 կովատերերի մասնակցությունը)։ դժբախտաբար հետագա թվերը պակասում են անհրաժեշտ յեզրակացության համար (յերևի նա հասներ մինչև 4,0), բայց և այնպես հաշվի առնելով հավաքական մասնակցությունը մինչև 3 կովատերերի (ըստ մեր ընդունած՝ աղքատների), պետք է վոր միջակ տնտեսությունների 4, 5, 6 կովատերերի) կոյեֆիցիենտի հետ միասին՝ նա զերակշռի ուժեղ տնտեսությունների մասնակցության և չեզոքացնի նրա ազդեցությունը կոոպերացիայում։ Սակայն, անկասկած է, վոր Լոռում կոոպերացված տնտեսությունների տեսակարար կշիռը թեքվում է հոգուտ ուժեղացող կուլակ տնտեսություններին, մյուս բոլոր գավառների իրական հակառակ դրության։

Ուշադրավ յերևույթ է նաև այն, վոր կաթնատնտեսական կոոպերացիայում վոչ միայն քիչ են առանց կովի տնտեսությունները, այլ և շրջանի միջին թվի համեմատությամբ կոոպերացված տնտեսություններին ավելի կով է ընկնում։ Այսպես՝ յեթե շրջանի 1 տնտեսության միջին թվով գալիս է՝

Լոռում	— 1,45 կով։
Լենինականում	— 0,98 »
Դիլիջանում	— 1,39 »
Բայազետում	— 1,02 »—

Միևնույն շրջաններում կոոպերացված յուրաքանչյուր տնտեսության ընկնում է՝

Լոռում	— 3,71 կով։
Լենինականում	— 1,77 »
Դիլիջանում	— 1,58 »
Բայազետում	— 2,48 »

Այդպես ել պետք է ասասել։ արտելին անդամագրվում է նա, ով շատ կով և շատ պրոդուկցիա ունի՝ վորի բեայիդացիան, վարկավորումն, մատակարարումն ապահովելով՝ տնտեսությունը դյուրությամբ կարողանում և վերականգնել իր արտադրողական ուժերը։

Ըստ տնտեսությունների մյուս օբյեկտների (ցանքս, բանվոր անասուն, ինվենտար) դժբաղդաբար թվերը բացակայում են՝ լրիվ սոցիալական ստրուկտուրան ներկայացնելու համար։

Ցեղրափակենք.—Կաթնատնտեսական կոոպերացիան ընդհանուր առմամբ միացնում է ներկայումս գյուղի չքավորության, վորոշ տեղերում նաև ուժեղ տնտեսությունների, սակայն այս վերջինների մասնակցության աստիճանը նվազ է առաջին յերկու դրուպաների առանձին թե միացյալ մասնակցությունից, ինչպես և ազդեցությունից*)։

Կաթնատնտեսական կոոպերացիան կանգնած է իր զարգացման ուղիղ ճանապարհի վրա։ Հետագա դեկավարությունից և կախված նրա փայլուն հեռանկարներն ու բախտը։ Դեռ ևս հուլիսին հրավիրված Համահայաստանյան Առաջին Կաթնատնտեսական խորհրդակցությունը նախատեսել եր նրա անելիքներն ու կազմակերպչական ստրուկտուրան։ Այսոր կանգնած ենք նրան վորպես առանձին միություն ձևակերպելու տնտեսական անհրաժեշտության առաջ։ Այդ նոր Միությունը միշտ մնալով «Հայդյուզկոոպ»–ի սիստեմի հարազատ մասնիկ՝ վերջինիս ոգնությամբ ու աջակցությամբ անկասկած կը խորացնի ու կը ծավալի Հայաստանի անասնապահական շրջաններում կաթնատնտեսական կոոպերացիան։

Հողը պատրաստ է։

ՎԱՐԿԱՑԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՑԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ ՑԵՎ ՆԵՐԿԱՑՈՒՄ

Մանր վարկի ընկերությունները կազմակերպվել են Հայաստանում սկսած 1901 թ. Մինչև 1905 թվի հեղափոխությունը չափազանց աննշան աշխատանք է տարված այդ ասպարիզում։ Ռեակցիայի շրջանում—հեղափոխությունից անմիջապես հետո—առավել ևս անուշադրության է մատնված յեղել դյուրացիա-

*) Մեր ստատիստիկան դեռ յելս դասակարգային հանապարհից մոլորված է։ Մենք հնարավորություն չունենք այդ միևնույն արտելներ, ըստ ցանքերի, ինվենտարի քանակի գրուպիրովկան տալու, վորը անվիճելիորեն կլրացնի և կը հաստատեր մեր մեջ բերած թվերը։ Բայց և այնպես մեր յենթադրությունները համարում ենք մոտավորապես ճշ

կան ապրանքների վարկավորման գործը։ Մանր վարկի ընկերությունների նորմալ զարգացման սկիզբը ներկա Հայաստանի տերրիտորիայի վրա կարելի է 1910 թվից համարել։ Յերեք-չորս տարվա ընթացքում նրանց թիվը հասավ 29 ընկերության, 10.363 անդամներով*)։ Ամենից շատ նրանք կենտրոնացած էին գրիգորության կենտրոններում՝ Եջմիածնի, Նոր-Բայազետի և Լենինականի գավառներում։

Նախկին վարկային կոոպերացիայի մասին այժմ-առավելապես բանկային աշխատակիցները պարծանքով են խոսում. և ամեն անգամ ընդգծում են, որ նրանք յերկրի տնտեսական յերակն էին։ Մանր վարկի նախկին ավագ ինոպեկտորներից մեկը յերանություն էր տալիս անցյալին, հատուկ ընդգծելով անցյալ վարկի արտոնությունները։

Իրաք. ի՞նչ էին իրենից ներկայացնում այդ «կոոպերատիվները». ավելորդ չէ այդ մասին իմանալ թե՛ ներկա ինոպեկտորներին և թե՛ կոոպերացիայի ներկա աշխատակիցներին։

Մեր ձեռքի տակ է 29 ընկերությունների առ 1-ն հուլիսի 1913 թ. մեջացյալ հաշվեկշիռը, որի գումարն է 331.863 ռ. 09 կոպ., որը նշանակում է յուրաքանչյուր կոոպերատիվին միջին թվով գալիս է 11.443 ռուբլի 76 կոպ. կամ մի անդամին միջին թվով 32 ռուբլի 88 կոպ.։ Պետական բանկը բաց է արել այդ ընկերություններին առ 1-ն հուլիսի 1913 թ. 303.000 ռ. կարճատև և 54.045 ռուբլի, յերկարատև վարկ։ Ընկերություններից 22-ը վերադարձություն են արել իրենց յուրաքանչյուր անդամին միջին թվով 42 ռուբլի և ունեցել են 22.285 ռուբ. 60 կոպ. ավանդ։ Եթե նայենք լինենք նրանց բալանսի կարևոր հոդվածների վրա՝ կը տեսնենք, որ՝

Սեփական միջոցները կազմում են բալանսի	5,02	տոկոսը
Փոխառություններ (Պետականից)	» 72,45	»
Ներգրաված միջոցներ	» 22,53	»

Մատակարարման կամ վաճառահանման աշխատանքներով զբաղվել են վոչ բոլորը և վոչ էլ բայն մասշտաբով։ Նրանք չափազանց թույլ են, նամանավանդ սեփական և ներգրաված (ավանդ) միջոցներով չնայած անդամ Պետական բանկի, այսպես ասած, հովանավորության։ Մենք այստեղ չենք խոսում «կոոպերատիվի» այլ խնդիրների մասին։

Ինչո՞ւմն է բանը և ինչո՞ւ պիտի այսպիսի խղճուկ պատկեր ունենային այդ «բանկերը»։

Ընկ. Մելչարսկին*) վարկային կոոպերացիայի այդ ձախող դրությունը վերագրում է Պետական բանկի քաղաքականության, որը հետապնդում էր կոոպերացիայի կազմակերպչական և տնտեսավարական աշխատանքների զեկավարման, այսինքն՝ «ինչպես այնպես, ինչ որ կրկնվում է դեռ ևս որպես անցյալի մնացորդ Անդրկովկասում-մեզ մոտ՝ բանկային աշխատակիցների «քաղաքականության» հետևանքով։ Սակայն լսենք Մելչարսկուն.— «կոոպերացիան պատվաստվում էր և ընկերություններն առաջ էին գալիս վոչ որպես հետևանք ազգաբնակության ինքնոգնության ու ինքնագործունեության, նրանք կոոպերատիվ էին լոկ ձևականորեն» (ընդգծումներն իմն են)։ Յեթե կուզենք այդ նախադասության մեջ կարելի է բովանդակել մինչպատերազմյան վարկային «կոոպերացիան». ճիշտ է նա ձևականորեն էր կոոպերատիվ. նա «բանկային կոոպերատիվ» էր, կամ ինչպես բանկերն են անվանում՝ նրա ստորին ողակը, բանկի կամակատարը։ Ի՞նչ, կարծում եք այն ժամանակվա բանկիրները չեյի՞ն հասկանում այդ, կամ թե՝ Մելչա՞րսկին է սխալվում.—իզուր յենթադրություններ են։ Բանկն իր եությամբ, իր ատոմոֆերայով միշտ և ամեն պայմաններում՝ սեղմում, ինքնագործունեությունից զրկում, թևաթափ է անում իր կլիենտ-կոոպերատիվին, կամ թիկունք տալիս նրան։ Ցարական բանկը պատվաստել էր ձևականորեն կոոպերատիվ, փաստորեն իր դյուղական բաժանմունքը։ Հարկավ այդ պայմաններում վոչ կարելի յեր խոսել կոոպերացիայի զարգացման, կոոպերացման գործի կամ տնտեսավարական նրա աշխատանքների ծավալման մասին՝ հոգուտ կոոպերատիվի՝ չքավոր անդամի։ Անցյալի այդպիսի տրադիցիային և ներկա նրա անդրադարձումներին մենք ջատագովներ չենք։

Հայաստանի ներկա տերրիտորիայի վրա միաժամանակ հոչոր աշխատանք էր տանում. կոոպերացիայի մի ուրիշ ձև-փոխատու-խնայողական ընկերություններ. որանց թիվը կազ-

*) Վարկային կոոպերացիայի վերաբերյալ այս ու հետագա թվական տվյալները հավաքում ենք՝ 1) Памятная книжка Эрив. губ. за 1902–1914 2) Кавказск. Календ. за 1900 1915 բաղդատության համար մենք կը վերցնենք 1913–1914 թվականը որպես նորմալ տնտեսական տարի։

*) Տես 3. К. № 1—2 Краткий обзор Кредит. Коп. Закавказья—1923 г.

մում եր 26 և 10,754 անդամով: Այս ընկերութիւններն ուժեղ տնտեսական կազմակերպութիւններ էին և ոգավում էին հասարակական վստահութիւնից: Նրանց միացյալ հաշվեկշիռը առ 1-ն հուլիսի 1913 թվին կազմում եր 1,469,400 ռուբլի 04 կոպեկ, միջին թվով յուրաքանչյուր ընկերության՝ 54,207 ռ. (մոտ 5 անդամ ավելի, քան վարկ. ընկերության) և մեկ անդամին 135 ռ. 65 կ. (շորս ու կես անդամ ավել քան վարկ. ընկերության անդամին): Պետական բանկի կողմից բացված և վարկ 603,000 ռ. կարճատև և 33,350 ռ. յերկարատև:

Փոխ-խնայողական ընկերութիւններից 19-ի բալանսում		
Սեփական միջոցները կազմում են	43,89	տոկոս
Փոխառությունը »	11,92	»
Ներգրված միջոցները »	44,19	»*)

Փոխառվում են ասել իրենց անդամներին 1,930,994 ռուբլի, միջին թվով մեկ անդամին 236 ռուբլի (ուղիղ 6 անդամ ավելի, քան վարկ. ընկերությունը): Կատարում են միաժամանակ բոլոր տեսակի ոպերացիաներ և մանավանդ բամբակի արտադրություն: Փաստորեն վոչ թե վարկային ընկերություններն էին վայելում հասարակական համակրանք ու վստահություն և հավաքում գյուղացիական ազատ միջոցները.—այլ «Փոխառու-խնայողական ընկերությունները հանդիսանում էին այն խոցովակները, վորոնք ծծում էին յերկրից մանր ապրանական խնայողությունները և արտադրում Պետական բանկին» **):

Պատմական այս տեղեկանքը մենք առաջ բերինք՝ մեկ արձանագրելու վարկային կոոպերացիայի անցյալ արագիցքան իր հետևանքով, նրա տեսակարար կշիռը համեմատած Փոխառու-խնայողական ընկերությունների հետ, (վորը ի դեպս չուտ սիրահարվողների համար հարուստ և պերսպեկտիվներ առաջացնող նյութ է) և յերկրորդ՝ վորպեսզի ժամանակակից վարկային կոոպերացիայի նմանությունների առատությանը վորոշել: Ցերկուսն էլ ավելորդ չեն մեր աշխատանքների հետագա պերիոդում:

Վարկային կոոպերացիայի ժամանակակից դրության մասին ընդհանուր առմամբ մենք խոսել ենք կազմակերպչական աշխատանքների քննության ժամանակ: Մնում է մեզ չափազանց սեզմ

*) 12 ընկերության բալանսում ավանդի գումարը հասնում եր 295,891 ռուբլու:

**) Вл. Мещаров. «Народный кредит.» Т.

ոգերով համեմատել այն մինչ պատերազմյան ընկերությունների հետ: Պետք է հիշել, վոր վարկային ներկա կոոպերացիան առանձնություն չունի անցյալ Փոխառու-խնայողական ընկերությունների հետ՝ վորոնք հարություն էին առել 1923 թ., ու չպիտանք ինչու անհայտացան հորիզոնից: Ներկա վարկային ընկերությունները ունեն Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերության կանոնադրությունները՝ արտադրական, վարկային և այլ ֆունկցիաներով: Նրանք ունեն իրենց կոոպերատիվ Միությունը—հանձինս «Հայդյուղկոոպ»-ի և իրենց կոմիսիոն կամ միջնորդական գործարքները մեծավ մասամբ կատարում են իրենց Միության միջոցով: Հետևավոր անդամ նմանություն չունի ներկա վարկային ընկերությունը անցյալի հետ և ամեն կերպ անցյալ կամուրջների հիմքերը հրդեհել պիտի, վորպեսզի կոոպերատիվ դիմը չյենթարկվի լոնության ու կամայականության:

Ներկա վարկային կոոպերացիան վերջ տարրիզում (չատ դեպքերում) դեբաղանցել է թե մինչպատերազմյան վարկային ու թե Փոխառու-խնայողական ընկերությունների գործունեությանն-տանձին-տանձին: Ստորև տալիս ենք համեմատական ազյուսակը:

Ազյուսակ № 9

	Կոոպերատիվներ	Անդամների թիվը	Միջին բալանսը մեկ ընկերության	Բալանսի վերաբերմամբ տոկոսներ		
				Սեփական	Փոխառ. (պիտ.)	Ներգրավ. (ավանդ)
Փոխ. խնայող. 1 հուլ. 1923 թ.	26	10,757	54207-00	43,89	11,92	44,19
Վարկ. ընկեր. 1 հուլ. 1913 թ.	29	10,363	11443-76	5,02	72,45	22,53
» » 1 հոկտ. 1925 թ.	30	11,495	52258-25	8,28	66,56	2,84

Այսպես ուրեմն խորհրդային վարկային կոոպերացիան յերկուարյա ընթացքում թե իր թվական քանակով, թե իր միջին հաշվեկշռի գումարով (առ մեկը սեպտեմբերի 27 ընկերության միացյալ հաշվեկշիռը հավասար է 1,410,972 ռ. 78 կ.) և, վոր ամենագլխավորն է՝ կոոպերատիվ սեփական միջոցներով (8,28 ընդդեմ 1913 թ. 5,02-ի) և կոոպերացված տնտեսությունների թվով նրվանել է հատատատ դիրք: Միակ խնդիրը, վոր պիտի լուծեն այդ կոոպերատիվները, և «Հայդյուղկոոպ»-ը՝ առաջին հերթին—գյուղացիական ազատ միջոցների ներգրավման պատրաստն է: Այս-

տեղ մենք հետաքրքիր ենք, այստեղ մենք չուտով պիտի գրավենք հին դիրքերը։

Սովետական կոոպերացիայի համար վերջնական նպատակ չեն մինչ—պատերազմական դրության կիրառումը, ի հարկե վոչ. վարկային կոոպերացիան կոոպերատիվ դրոշակի տակ պիտի շարունակի այսուհետև կազմակերպել, իր ազդեցության գիրկն առնել դեռ ևս չկոոպերացված չքավոր տնտեսությունների խոշոր կոնտինգենտ ու կարգավորել նրանց տնտեսավարական առորյան կոոպերատիվ մանր վարկի միջոցով։

Ի՞նչ հասարակական խմբակցությունների կազմակերպություն էր վարկային կոոպերացիան անցյալում և վո՞րն է նրա ներկա սոցիալական կազմը։ Զավիդանց կարևոր և հետաքրքիր այս խնդիրներին պատասխանելու համար բացակայում են ուղղակի տվյալներ։ Ստատիստիկան, առանձնապես մինչ հեղափոխական—այս որինակ հարցերով դրեթե չի զբաղվել, մինչդեռ դա նրա անմիջական խնդիրներից մեկն է։ Ս.յսորվա խորհրդային ստատիստիկան նույնպես քիչ բան է արել պարզաբանելու ազգաբնակչության դասակարգային ներկա խմբավորումների կատարյալ պատկերը. սա նրա ամենամեծ թերություններից մեկն է։

Մեր ձեռքի տակ չկան նմանապես հետաքրքրող խնդրին նվիրված հաշվետվություններ, աշխատություններ, ուսումնասիրություններ։ Ցերբեմն այս կամ այն դրվածքում հեղինակը հարեվանցիորեն, ի միջի այլոց, մեկ-յերկու նախադասություն նվիրում է կոոպերացիայի դասակարգային բովանդակության. գո՞ւցե և այս ժլատությունը վերագրել ժանդարմերիական կարգերին. —հազիվ թե, ավելի շուտ կոոպերացիայի յերկրորդական նշանակության, դիրքի։

Վարկային կոոպերացիայի ասպարիզում յերկար տարիներ աշխատած ընկ. Մելչարսկին հուսահատված ստատիստիկական ճշգրիտ տվյալների բացակայությունից՝ իր յեզրակացությունները ձգտում է հիմնավորել սեփական հիշողություններով ու դիտողություններով։ *) «Ընդհանուր առմամբ,—գրում է նա.— վարկային կոոպերացիայի հիմնական մասսան կազմում էր միջակ գյուղացին—դեպի աջ և ձախ թեքումներով» (ընդգծումը մերն է)։ Հարկավ մեզ շատ քիչ բան են ասում այդ «աջ ու ձախ թեքումները»։ Վորպես բնորոշող գիծ կարելի յե հիշատակել—շարունակում

*) Տես Э. К. № 12 Краткий обзор и т. д.

և հիշել նույն հեղինակը,—վոր մանր վարկի հիմնարկությունների խորհուրդների և վարչությունների կազմը անկասկած ավելի դեմոկրատական էր, քան հետագայում սպառողական կոոպերացիային միացված վարչական կազմը»։ Անկասկած «դեմոկրատական վարչական կազմը» կրկին քիչ բան է ասում մեզ։

Միևնույն այս խնդրին անդրադարձել է հարևանցիորեն նաև մի այլ ականավոր գործիչ *). «Ինչպես այստեղ (Ցերևանի նահանգում մանր վարկի բանկերը (լսեցեք. համենայն դեպս վոչ կոոպերացիան. Մ.) կազմակերպվում են ամենից հարուստ (зажиточных) մարդաշատ և կուլտուրական գյուղերում. լեռնային մասերում, քիչ զարգացած և տնտեսապես աղքատ ազգաբնակչության մեջ նրանք բոլորովին բացակայում են» (ընդգծումները մերն են)։ Չի՞ բնորոշում արդյոք այս վկայությունը վարկային «բանկերի»—«կոոպերատիվների» սոցիալական բաղադրությունը. համարձակորեն կարելի յեր այստեղ վերջակետ դնել, յեթե ընկ. Գ. Պիճիկյանը հակառակը չպնդեր՝ հենված թեև վոչ բավարար տվյալների վրա **)։

Նրանից իմանում ենք, վոր Ցերևանյան նահանգի վարկային կոոպերացիայի անդամներն բաս իրենց հողատիրության չափի առորադասվում են.—

Հողազուրկներ	— 4,1 տոկոս.
1 դես. մինչ 5 դես. ունեցող . . .	—73,3 »
6 ,, ,, 10 ,, ,,	—18,3 »
11 ,, ,, 20 ,, ,,	— 3,8 »
21 ,, ,, 30 ,, ,,	— 0,3 »
30 ,,-ից ավելի ,,	— 0,2 »

«Հայկական գյուղի սոցիալական բարձր և ստորին շերտերը.—յեզրակացնում է նա,—աննշան են ներկայացված վարկային ընկերություններում, վորոնց անդամների հիմնական մասսան բաղկացած էր անուշ և այսպես կոչված աշխատավորական տրնտեսությունների ներկայացուցիչներից» ***) (ընդգծումները մերն են)։

---

*) А. С, Пиралов—Мелкий Кредит в Закавказском крае

**) Пичикян Кризис Сельского хозяйства и организация мелкого кредита З К- кн. 5, 1924 г.

***) Պետք է ավելացնել, վոր հոդվածագիրը օբյեկտիվորեն չի հիշատակում այն զրավոր աղբյուրները, վորոնց վրա հենում է իր յեզրակացությունը։

Հողաաիրության չափի հիման վրա՝ առանց հաշվի առնելու տնտեսության մյուս մոմենտները—այսպիսի յեզրակացությունը խախուտ լինելուց զատ, նաև սխալ է: Գյուղացիական դրությունը բովիչան վորոշել առանց հաշվի առնելու արտադրության միջոցները (орудия производства)—թեկուզ տնտեսությունների և ինվենտարի ապահովության աստիճանը—անկարելի յե և ապարդյուն. նույնը և ցանքերի մասին: Զե՞ վոր հողատերը կարող է և չոգտագործել իր հողամասը, չնորհիվ արտադրական միջոցների բացակայության, կամ թե փոքր հողատերը կարող է լինել և կապալառու, տնտեսապես շատ ուժեղ և ուրիշներին շահագործող: Այդ մասին մենք ունենք ամենապայծառ օրինակները մինչ—պատերազմական հայկական գյուղի սոցիալական չերտավորման պատմությունից. դժբախտաբար այստեղ ավելի մանրամասն կանգ առնել դրա վրա—չենք կարող. մի այլ տեղ մենք քննության նյութ ենք դարձրել այն:

Ընկ. Գիհիկյանը յեզրափակում է իր վաղնորությունը—«մենք վարկային ընկերությունները հանդիսանում եյին Անդրկովկասյան գյուղի ճնշված և շահագործվող աշխատավոր տարրերի պայքարող կազմակերպությունը՝ ընդդեմ վաշխառուական և առևտրա-միջնորդական կապիտալի». հիշա՞ և, վոր նրանք պայքարել են վաշխառուական կապիտալի դեմ,—սակայն հանդիսացե՞լ են արդյոք ճնշված և շահագործվող տարրերի պայքարող կազմակերպությունը—ի հարկե վոչ: Ուրիշ խնդիր է՝ ի՞նչ պետք է լինի վարկային կոոպերացիան և ուրիշ բան է՝ ինչ վոր նա յեղել է մինչ պատերազմ:

Հենված վերոհիշյալ դիտողությունների վրա, մենք կարող ենք վորոշ վերապահությամբ յեզրակացնել հետևյալը.—

Նախ՝ Փոխառու-խնայողական ընկերությունները ընդհանուր առմամբ հանդիսանում եյին քաղաքային մանր-բուրժուազիայի և արհեստավորության հարատև կազմակերպությունները. բնորոշ է, վոր նրանք ըստ մեծի մասի կենտրոնացած եյին քաղաքներում և գյուղաքաղաքներում: Ցերկրորդ՝ ինչ վերաբերում է վարկային ընկերություններին—սրա անդամների սոցիալական չերտերին, ապա հաստատորեն կարելի յե պնդել, վոր անդամների խոշոր կոնտինգենտը հանդիսանում եր գյուղի համբան, կապալառուն, միջնորդը, առևտրականը և ուժեղ՝ բաղաքի հետ հաղար թելերով կապված՝ տնտեսությունները: Վարկային

կոոպերացիան սրանց, մեծամասն սրանց կազմակերպությունն եր: Ուշագրավ է այն հանգամանքը, վոր վարկային ընկերությունները հաճախ կրկես եյին դառնում գյուղի այսպես կոչված թաքֆայականության, սա նշանակում է, վոր գյուղի առավելապես թույլ տնտեսությունները վերջին տարիներում փոքր եյին անում դերակշռող դեր խաղալ նրանցում. սակայն այդ պայքարը պատերազմական տարիներին լուծվեց համենայն դեպս հոգուտ գյուղի հարուստների:

Ժամանակակից վարկային կոոպերացիայի սոցիալական կազմը բնորոշելու համար նմանապես բացակայում են սիստեմատիկական հետազոտումներ գյուղատնտեսության նկատմամբ: Համաձայն Վիճակագրական Վարչության 1925 թվի 10 տոկոսային հետազոտության (դեռ ևս չհրատարակված), Հայաստանի գյուղացիական տնտեսությունները բաժանվում են ըստ ցանքսերի տարածության:

Աղյուսակ № 11.

Գրուպաներ ըստ ցանքսի տարածութ.	Տնտնտեսութ. թիվը	Վոր տոկոսն և կազմում
Առանց ցանքսի . . .	23.588	14.77
Մինչև 1 դես. ցանքսի .	62.428	39.08
,, 2 ,, ,, .	40.223	25.18
,, 3 ,, ,, .	18.129	11.35
,, 4 ,, ,, .	7.966	4.97
,, 5 ,, ,, .	3.527	2.21
,, 6 ,, ,, .	1.615	1.01
,, 8 ,, ,, .	1.299	0.81
,, 10 ,, ,, .	627	0.39
10 դես. ավելի ,, .	333	0.21
	159.735	100

Հաշվելով մինչև 2 դես. չքավոր, 2–ից–5 գ՝ միջակ և 6–ից բարձր ուժեղ տնտեսություններ այստեղից կարելի յե յեզրակացնել, վոր մեզնում գրուպաներն ըստ ցանքսի կազմում են՝

Առանց ցանքսի	— 14,77	տոկոս
Աղքատ տնտ.	— 64,26	»
Միջակ »	— 18,53	»
Ուժեղ »	— 2.42	»

Վարկային կոոպերացիայի անդամների ըստ ցանքսի տարածության տարաբաժանումն չունինք. հնարավոր է ոգտվել նրանց վարելահողի ապահովության տարբեր չափանիշից *):

Առանց վարելահողի	--	0,60 տոկ.
Մինչև 2 դես. վարելահող	—	23,62 »
» 4 » »	—	42,17 »
» 6 » »	—	21,85 »
» 8 » »	—	6,99 »
» 10 » » և ավելի	—	3,21 »

Հաշվի առնելով մեր գյուղատնտեսության հողագործության յեղանակը, ապա տնտեսությունների շնչերի 5-ից քիչ ավելի միջին թիվը—կարելի յե մոտավոր ճշտությամբ վերականգնել նրանց գրուպաների պատկերը՝

Առանց վարելահողի	—	0,69 տոկոս
Աղքատ տնտես.	—	65,79 »
Միջակ »	—	28,84 »
Ուժեղ »	—	3,21 »

Յեթե ըստ ցանքսի տարածության աղքատ տնտեսությունները կազմում էին 64,26 տոկոս, և ուժեղ՝ 2,24 տոկոս, ապա ըստ վարելահողի ապահովության կոոպերացիայում աղքատ տնտեսությունները կազմում են 65,79 տոկոս և ուժեղ՝ 3,21 տոկոս: Միջակ տնտեսությունները կոոպերացիայում համեմատաբար ավելի յեն քան շրջանի տնտեսության մեջ:

Մեր յեզրակացությունը թերի կլինի, յեթե չը պարզենք, թե այդ գրուպաններն ըստ իրենց արտադրողականմիջոցների ի՞նչ դիրք ունեն, կարո՞ղ են արդյոք առանց դրսի ոգնության ինքնուրույն տնտեսություն վարել: Մենք պիտի հաշվի առնենք, ուրեմն, բանվոր անասունների ապահովության աստիճանը առաջին հերթին:

*) Թվերը վերաբերում են նախաալեոնային և լեոնային շրջանների (հացաբույսերի գոնայի) 14 վարկային ընկերության. բնական է, որ այստեղ վարելահողը կարևոր չափանիշ համարվի:

Բանվոր անասուն չունեցող հայաստանի տնտեսությունների 55,30 տոկ. իսկ կոոպերացված տնտեսությունների 49,39 տոկոս քոչվորում *)

	Բոլոր տնտես.	Կոոպերատ. տնտ.
Ցերլանի գավառ	64,85 տոկ.	74,59 տոկ.
Եջմիածնի »	75,84 »	65,50 »
Լենինականի »	62,61 »	56,69 »
Ն.-Բայազետի »	50,65 »	40,62 »
Դիլիջանի »	40,75 »	19,81 »
Թարալագյազի »	37,10 »	39,67 »
Միջին թվով՝	55 30 »	49,39 »

Վարկային կոոպերացիայի անասունների ապահովության աստիճանը

Աղյուսակ № 12

	Բանվոր անասուն		Կաթնատ. (կովեր)	
	Տնտ. թիվը	Տոկոս.	Տնտ. թիվը	Տոկոս.
Վարձով չունեն . .	1191	42.4	1123	40.0
Ունեն 1 զույգ . .	396	14.1	609	21.7
» 2 » . .	884	31.5	613	21.7
» 3 » . .	122	4.3	196	7.0
» 4 » . .	162	5.8	117	4.2
» 4-ից բարձր	53	1.9	151	5.4
Ընդամենը՝	2809	100	2809	100

Ըստ ամենայնի դրությունն այստեղ միանգամայն անժխտելի է. բանվոր անասունից զուրկ տնտեսությունների թիվը, ինչպես վերևում նկատեցինք, միջին թվով կազմում է 49,39 տոկոս. այնուհետև մինչև մի զույգ բանվոր անասուն ունեցող տնտեսությունները կազմում են 45,6 տոկոս: Մինչև յերկու

*) Բոլոր տնտեսությունների վերաբերյալ թվերը վերցրված են գիտակցական վարչության այս տարվա 10 տոկոսային ոստիկանների ավյալներից, իսկ կոոպերատիվների նկատմամբ թվերը վերաբերում են 4880 ոստիկան տնտեսություններին:

զուլդ բանվոր անասուն ունեցող՝ նշանակում է կրկին ուժեղ ան-
թյուններից կախված—անտեսությունները 10,1 տոկոս են: 2
զուլդից ավելի անտեսությունները քիչ, իսկ յերեք զուլդը՝ նվա-
զագույն տոկոս է կազմում 1,9: Կը նշանակե ինքնուրույն ան-
տեսություն ունենալ կարող են միայն այս վերջիններս. սրանք
միաժամանակ պիտի ոգնեն—շահագործեն առաջիններին. հակայա-
կան տոկոսը կարիք ունի դրսի ոգնության կամ շահագործման,
վորպիսի բնույթ հաճախ կրում է այդ ոգնությունը: Այստեղ է,
վոր կոոպերացիան պիտի կատարի իրեն վիճակված խնդիրներից
կարևորը—գյուղատնտեսության մեքենայացման, կոոպերաց-
ման գործը: Տրակտորը նոր-նոր է մուտք գործում հայկական
գյուղը. նա առաջին հերթին պիտի լինի կոոպերացված և բան-
վոր անասունից զուրկ անտեսությունների գործավիրը: Բանվոր
անասունին այդպիսի խոշոր բացը արագ կերպով կարող է միայն
լրացնել «յերկաթե նժույգը». կոոպերացիան, նրա միությունը
այդ ուղիով պիտի ընթանան, հաղթահարելու բանվոր անասունի
բացակայության պատճառով գյուղում ծայր առած շահագործ-
ման:

Մեքենան գյուղի անտեսական ու կուլտուրական—սոցիալիս-
տական հեղաշրջման առաջնակարգ խթանն է—ասում է Տրոցկին:

Ինվենտարի ապահովության մասին տեղեկությունները բա-
լբովին բացակայում են: Ըստ «վիճակագրական տեղեկատվի» *)
հիմնուր տվյալների իմանում ենք, վոր 1923 թ. արդեն և գումար
չունեցողների թիվը Հայաստանում արտահայտվում էր 74,24տոկ.
անտեսությունների. 1924 թ. այդ տոկոսը քիչ իջնում է՝ հասնում՝
69,29-ի: Պետք է յենթադրել, վոր ընթացիկ 1925 թ. շնորհիվ
տնտեսական մեր ընդհանուր-արագ վերելքին նրանց թիվը պա-
կասի մինչև 50 տոկոս:

Ագրարնակիչության մոտ 50 տոկոսն անկասկած ներկայումս
զուրկ է ինվենտարից և բանվոր անասունից—վարկային կոոպե-
ռացիայի բազան, նրա ոգնության օբյեկտը առավելապես անտե-
սությունների այս կոնտինգենտն է:

Կարևոր է նաև պարզել թե վարկային կոոպերացիայում ան-
տեսությունների յուրաքանչյուր դրուպան ինչ մասնակցություն
ունի՝ հիմք ընդունելով անդամների վոչ թե հողային, այլ բանվոր
անասունների ապահովության չափանիշը:

*) «Վիճ. տեղեկատու», պրակ համար 6 էջ 78 Յերևան 1925 թ.

Հետազոտված 4880 անտեսություններում առանձին դրուպա-
ների մասնակցության աստիճանը (կոյեֆիցիենտը) հետևյալ հե-
տաքրքիր պատկերն է տալիս.

Դրուպաների մասնակցության կոյեֆիցիենտը ըստ գավառների

Աղյուսակ № 13.

ԳԱՎԱՌՆԵՐ	Հետազոտված անտեսությունների թիվը	Դրուպաներ (ըստ բան. անասունների)					
		—	1 դ.	2 դ.	3 դ.	4 դ.	5 և ավել
Յերևանի . . .	1566	1,15	1,03	0,81	0,31	0,19	—
Եջմիածնի . . .	620	0,86	1,08	1,45	3,15	3,00	—
Լենինականի . .	404	0,91	1,19	1,14	0,72	1,61	0,63
Ն.-Բայազետի . .	1167	0,80	1,18	1,20	1,04	1,34	1,81
Դիլիջանի . . .	823	0,49	1,72	0,98	1,80	1,83	6,74
Դարալագյազի . .	300	1,07	0,80	1,15	0,90	1,35	0,26

Վերևում մենք հիշեցինք, վոր գաչասային շրջաններում թե-
լեվոր յերկու զուլդ բանվոր անասունը անտեսության ինքնուրույ-
նությունը պահպանի, այն ինչ լեռնային և նախալեռնային շրջան-
ներում նա հնարավոր է 3,4,5. զուլդով: Աղյուսակն այդ պատ-
կերը ներկայացնում է՝ զուրկ թողնելով անասնապահական գոտի-
ները: Այստեղ (Լենինական-Բայազետ, Դիլիջան, Դարալագյազ)
մասնակցության կոյեֆիցիենտը հարաճուն զարգացման է՝ անա-
սունների թվի բարձրության նկատմամբ: Բայց և այնպես նրանց
մասնակցությունը չափազանց աննշան է՝ 2 և կեսից—3 զուլդից
սկսած՝ յեթե ի նկատի չառնենք Դիլիջանը և Նոր-Բայազետը,
վ. բանզ բանվոր անասունների ապահովության աստիճանը բավա-
կանին սուլիզ է: Վերջին մեր ընդհանուր յեզրակացությունն այն
է, վոր մեր արդի վարկային կոոպերացիայում գերակշռող դիրք
ունեն այն տնտեսությունները, վորոնք ամենից շատը ունեն մեկ
զուլդ բանվոր անասուններ—իսկ գրանք չբավոր, ուրիշից կախում
ունեցող, ուրիշի ինվենտարին կարոտ կամ իր հողամասն ունևո-
ին կապալով ստոր—ագրատ տնտեսություններ են:

Բայց մենք վարկային կոոպերացիայի մասին դեռ ասելիքներ
ունենք: Նրան վիճակված է խոշոր դեր կատարելու յերկրի ար-

տնտեսական ուժերի բարձրացման, կոոպերացման ասպարեզում: Հարկավորեն վորոշ նախագծեր, աշխատանքի և գործունեության ուղղակի գիծ-մինչպատերազմական դափնիներով չշպարելու կոոպերացիայի ներկա հասարակական-մասսայական դեմքը: Նրա զարգացման-խորացման առաջին պերիոդում սխալներ յեղել են և դեռ կան: Հարկավոր է արմատական անել այն՝ սիստեմատիկ կոոպերատիվ գիտակցությամբ: Մենք դժբախտաբար քիչ (շատ դեպքում վատ) ենք պրպտվում կոոպերացիայի գաղափարի մասսայականացման գործով. կուլտուրական պրոպագանդա կոոպերացիայի ասպարեզում գրեթե չի տարվում. կոոպերատիվի անդամը ներկայումս չը նայած կրկնապատիկ անդամակոչի և քան առաջներում, բայց և այնպես նա չի ցավում, չի տրտնջում, չի պայքարում իր կոոպերատիվի համար: Սխալ կը լինի յենթադրել, թե դա հնարավոր է Միության շրջաբերականներով, կամ համագումարներով: Սորին միավորին և պատկանում, նրա վարչության-կոոպերացիայի կուլտուրական հաղթանակի նախապատրաստումը. այս ասպարեզում թե միությունը և թե պետական հասարակական կազմակերպությունները վոչ մի մեջոց չպիտի խնայեն: Ինչ խոսք, վոր ամենալավ պրոպագանդան տարկայորեն մատծող գյուղացիության համար կը լինի ընկերության արդնակելի գործունեությունը—անվնաս տնտեսավարական գործարքները, փոքր վերապիր ծախսերը, սահմանափակ շտատը և վոր գլխավորն է պարզ և մաքուր հաշվետվությունը:

Այս «դիերկրորդական» համարվող խնդիրների բարեհաջող լուծումից և կախված խոշոր այն գործը, վորին այսուր—վաղը պարտավոր է ձեռնարկելու «Հայգյուղկոոպ»-ը իր ամբողջ սիստեմով: Ապրանքային տնտեսության ներկա շրջանում գյուղացու տնտեսած միջոցների կենտրոնացման և իրեն գյուղացու շահերին ոգտագործելու ցանկությունը վերջապես պիտի իրականանա-վերոհիշյալ հարցերի իրացման գումարով:

Կոոպերացիայում ավանդային գործառնության իրագործման և դեկավարման գործը ուշ թե շատ կոոպերատիվ Միությունը պետք է իր ձեռք առնի՝ վորոշ համաձայնության գալով պետական կամ կոոպերատիվ Բանկերի հետ: Այս գծով, այս ուղղությամբ միայն հնարավոր և գյուղացիական փոքրիկ խնայողությունն ոգտագործելու պետական տնտեսության ասպարեզում՝

նրա իսկ շահերին նվիրված: Զուգընթաց սրան գյուղատնտեսական կոոպերացիան վորպեսզի ամրապնդի իր նվաճումները վերջիվերջ՝ պետք է առանձին ուշադրություն դարձնի կոոպերացիայի ապարեզում կոոպերատիվ վարկավորման եիվանդոտ կողմերի վրա: Պարտադիր վարկավորման սիստեման այն ցեցն է, վոր կրծում է կոոպերացիայի հիմքերը: Միությունն իր ձեռքին կենտրոնացնելով կոոպերացիայի և վարկավորման և մատակարարման գործը-ն չիք կարող է դարձնել այն, ինչ վոր վտանգավոր ու վատառողջ է կոոպերացիայի որգանիզմի համար: Մաղաչափ անգամ նա ներկա պայմաններում չի կարող աններգաշնակություն մտցնել պետական տնտեսության սիստեմում, բացի նրա հիմքերն ամրապնդելուց, նրան սպասավորելուց:

Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպչական ընդարձակումը հետզհետե բարդանում, մասնագիտանանում է: Ներկա նրա Միությունը-«Հայգյուղկոոպ»-ը պետք է դառնա վոչ միայն կոոպերատիվ կազմակերպչական-տնտեսավարական ղեկավար որգան, այլ և վողջ կոոպերատիվ սիստեմի վարկային-ֆինանսական կենտրոն: Այս պայմաններում նա լիակատար կերպով կապահովի մի կողմից կոոպերատիվ բարդ միավորների-կոմունաների, կոլլեկտիվների-զարգացման գործը, մյուս կողմից կարգարացնի մասսայական կոոպերացման գաղափարը: Նրա՝ վորպես կոոպերացիայի վարկային ֆինանսական, կազմակերպչական-տնտեսավարական ամբողջական սիստեմի ստորին միավորը՝ դառնալու են գյուղատնտեսական վարկային և վոչ վարկային ընկերություններ:

Այս ուղղությամբ է, վոր պիտի ընթանա կոոպերացիայի հետագա ծավալման պրոցեսը. այս ճանապարհով է, վոր պիտի կերտվի դեպի սոցիալիստական հասարակարգը տանող կոոպերատիվ գործը:

Վարկային ընկերությունները կարող են այդ մեծ գործի ոգեկոչը դարձնել կոոպերացիայի դրոշակի տակ՝ «Հայգյուղկոոպ»-ի բավանդակ ղեկավարությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՏՈՒԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.

Գյուղատնտեսական կոոպերացիան խոշոր նվաճումներ է կատարել նաև այգեգործության, մեղվաբուծության, շերամապահու-

թյան, ծխախոտագործության և մեր ժողովրդական տնտեսության այլ տոգաբերներում։ Նշանակալից և կոոպերատիվ գինեգործության զարգացման թիվը։ Անցյալ տարի այգեգործական ընկերությունները միասին պատրաստել էին 70·000 գալ գինի։ Այս տարի միենույն կոոպերատիվները չը նայած բերքի ծայր աստիճանի սակավության, այնուամենայնիվ բարձրացրել են գումարով 100,000 գալ։ Կարևոր է նկատել, որ ընթացիկ տարում պետական տնտեսական օրգաններից ամենից մեծ հաջողություն հայթայթման գործում ունեցել և կոոպերացիան։ Այգեգործական ընկերությունների պրոդուկցիան (գինի, ոգի, սպիրտ) այս տարի տրամադրվում է շուկայի միջին նորմայ գներով 350·000 ռուբ. ավելի։ Պետք է յենթադրել, որ կարճ ժամանակամիջոցում գինեգործության ռացիոնալ զարգացումը կընթանա կոոպերատիվ գործության ուղիներով։ Հիմնական և հրատապ հարցը այստեղ գինեգործական նկուղների ու սպիրտի գործարանների կահավորման ու տարբավորման գործն է։ «Հայգյուղկոոպ»-ը ամեն միջոց չպիտի խնայի կոոպերացման գրացնոր այստեղ խորացնելու՝ ներգրավելու այդ գործերին, ամուր հիմքերի վրա դնելու թանկարժեք այս կուլտուրայի ընդարձակման անհետաձգելի աշխատանքը։

Այգեգործության տեխնիկական վարկավորման հիմանդամ պրոբլեմները ջնարհիվ մեր թյան ջանքերի հետևեան ակի յեն տալիս գլանային և հոժարակամ ու յերկարատև վարկավորման սկզբունքներին։ Թվում է մեզ, որ այգեգործ. կոոպերացիան կոոպերատիվ կենտրոնի գեկավարությամբ ներկա չոչափելի նվաճումները կը կենտրոնի առաջիկա տարիներում՝ թե կոոպերացման ներկայումս կոոպերացված և այգեգործության 17 տոկոսից ավելին) և թե գինու վերամշակման ու ապտման տարբերներում։

Բամբակագործության բնագավառում «Հայգյուղկոոպ»-ի մի տարվա աշխատանքները պատկվել են լիակատար հաջողությամբ։ Կոոպերացիան այս տարի կազմակերպել իր բամբակի կամպանիան մոտ 2000 դեսյատին տարածության վրա։ Ներկայումս ծրագրված գալիք տարվա (25–26) կազմակերպչական աշխատանքների մեջ նախատեսվում է բամբակագործ տնտեսություններից կոոպերատիվներ կազմակերպելու անհետաձգելի խնդիրը։ Կոոպերացիայի միջոցով պետք է կատարվի վոչ միայն վարկավորումը, մատակարարումն, ագրոնոմիկական ոգնությունը, բամբակի հավաքումը, այլ և Միությունը հիմնական պայմանագրերի և կոմիսիոն հանձնարարությամբ պիտի հոգա և նրա վաճառահանման գործը։ Գնատական արդյունաբերության և արտադրող բամբակագործների միջոցով, շաղկապող ողակը—կոոպերատիվ Միությունն է լինելու, «Հայգյուղկոոպ»-ը։

Հատուկ կուլտուրաների շարքում շերամապահությունը և ծխախոտագործությունը Հայգյուղկոոպի կողմից մաքսիմալ ուշադրության ու զուրգուրանքի առարկա պիտի դառնան և այսուհետև։ Բուժմի պատրաստման գործը կոոպերացիայի միջոցով և՛ արդյունավետ, և՛ արագ, և՛ լավ և կատարվում։—ընթացիկ տարվա փորձը այդ ևս ապացուցեց։ Ինչ վերաբերում է շերամի հումքի պատրաստման—ապա դա կատարել է լիովին կոոպերացիան 10 անգամ ավելի չատ, և լավ, քան անցյալ տարի—30,000 տուփ՝ ընդդեմ 1923—24 թ. 5,000-ի։ Միենույնը նաև ծխախոտի կուլտուրայի մասին։ 1923—24 թ. կոոպերացիան ուներ ընդամենը 1,500 փութ ծխախոտ, ընթացիկ 1924—25 թ. բերքը դերազանցում է 4 անգամով. (5,000—6,000) այս հաջողությունը պիտի հարատև դարձնել՝ տրամադրելով տարին մի քանիներին վարկավորման և ինվենտարիզացիայի մաքսիմալ արտոնություններ։

Մեր նպատակից դուրս է կանգ առնել աշխատանքի այն լայնատարած հնարավորությունների ու արտադրությունների հատուկ ճյուղերի կոոպերացման վրա, որ որդեկոխվորեն առաջադրում է Գյուղատնտեսական կոոպերացիային Հայաստանի հարուստ արտեսությունը։ «Հայգյուղկոոպ»-ը գյուղատնտեսության զարգացման, նրա ապրանքայնացման նպաստող բոլոր բնագավառներում պետք է ընդառաջ գնա ոգնելու, կազմակերպելու, մատակարարելու և սպառելու անտեսության տվյալ արտադրությունը, վերակենդանելու նրա արտադրողական ուժերը։ Կուսակցությունը և Բանվորա-Գյուղացիական իշխանությունը այդ և պահանջում նրանից՝ տրամադրելով հնարավոր բոլոր միջոցները։

Տարորինակ կը լիներ յենթադրել այդ հսկայական աշխատանքի արագ և հաջող իրագործումը առանց ուժերի մաքսիմալ կենտրոնացման և տարրերի անընդհատ ու վճռական պայքարի։ «Մի ամբողջ պատմական դարաշրջան և հարկավոր, փորձեցի ազգարնակչության ամբողջության մասնակից անել կոոպերացիային» չպետք է մոռանալ Լենինի նախազգուշացումը խիստ վոգևորվող և անհամբեր ընկերների նկատմամբ։

ԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեզանում կոոպերացիան ընդդրկել է առանձնապես ազգային փոքրմասնության։ Համեմատած Անդրկովկասի մյուս պետությունների կամ թե նույնիսկ սոցառողական կոոպերացիայի հետ՝ արտադրական կոոպերացիան այս խնդրում ևս առաջնակարգ տեղ է գրավում։ Այդ կոոպերացումը անտեսությունների առանձին ճյուղերում արտահայտվում է.

Կոոպերացումը ըստ ազգությունների առ 1 ոգոստոսի 25 թ.

Աղյուսակ № 14

Ազգություններ	Կաթնատնտ.		Վարկային		Գյուղատնտեսակ.		Այգեգործ.		Մեղվաբ.		Մյուս տիպերի		Ընդամենը	
	Տնտ. տոկ.		Տնտ. տոկ.		Տնտ. տոկ.		Տնտ. տոկ.		Տնտ տոկ.		Տնտ. տոկ.		Տնտ. տոկ.	
Հայ . . .	306560.82		8667	84,5	450	95,3	854	98,0	660	95,5	227	91,7	13923	78.90
Ռուս . .	1448	28,4	237	2,3	22	4,7	—	—	23	3,5	35	8,3	1758	9.96
Թուրք . .	545	10,7	1299	12,7	—	—	11	1.2	15	2,2	—	—	1870	10,60
Այլք . .	39	0,7	53	0,5	—	—	6	0,8	—	—	—	—	95	0,54
Ընդամեն	5094	100	10256	100	472	100	871	100	691	100	262	100	17646	100

Հաշվառման 1922 թվի գյուղատնտեսական վիճակագրության տվյալները կազմում են տնտեսությունների.

Հայ — 85,98 տոկոսը. *Ռուս — 2,45 ,,*

Թուրք — 9,80 ,, *Այլք — 1,77 ,,*

Բաղդատելով այս տվյալների կոոպերացիայում ունեցած տոկոսային հարաբերության հետ՝ (աղյուսակ համար 14), ստանում ենք նրանց մասնակցության կոոֆիցիենտը

Հայ — 0,92 *Ռուս — 4,06*

Թուրք — 1,08 *Այլք — 0,31*

Միևնույն այդ բաղդատությունից պարզվում է նաև առանձին ազգությունների կոոպերացման տոկոսը՝ իր ամբողջի նկատմամբ.

Կոոպերացման տոկոսը ըստ ազգության

Աղյուսակ № 15

Ազգեր	Տնտեսությունների թիվը	Կոոպերացված տնտեսությ.	Կոոպերացման տոկոսը
Հայ	129.129	13.923	10.78
Ռուս	3.679	1,758	47.76
Թուրք	14.718	1,870	12.71
Այլք	2.659	95	3.76

Թե կոոպերացման տոկոսով և թե մասնակցության կոոֆիցիենտով առաջին տեղը գրավում են ռուս, ապա թուրք և միայն հայ։ Գյուղատնտեսական կոոպերացիան հաշվի չի առնում թե տվյալ տնտեսությունը ի՞նչ ազգության ոգտագործման և պատկանում. նա միևնույն յեռանդով ձգտելու յե առհասարակ տնտեսությունների կոոպերացման առկախ նրանց ազգային կերպարանքի։ Ցեվ յեթե մենք վերլուծելինք ներկա կազմը՝ նպատակ ունենալինք չեշտելու միայն, վոր գյուղատնտեսական կոոպերացիան ազգային փոքրամասնության զգալի ոգնություն և հասցնում։

— . —

Կոոպերացիայում վարչական կազմը վճռական դեր և կատարում. նրա ղեկավարության և հանձնվում վոչմիայն կոոպերատիվի տնտեսավարական, կազմակերպչական, վարկավորման առօրյա աշխատանքները, այլ և անդամների արտադրության, կոոպերատիվ վերամշակման, կոոպերատիվ արդյունաբերության ձեռնարկների ղեկավարը։ Առ 1-ն հոկտեմբերի վարձու աշխատավորների թիվը վերոհիշյալ ձեռնարկներում հասնում է 575-ի։ Կոոպերատիվի ղեկավարը պիտի լինի վոչ միայն «լավ մարդ», լավ աշխատող կամ միայն կոոպերատոր, այլ և բարեխիղճ տնտեսավար։ Մեզնում արդեն ծայր է առնում չարաշահություններ, սիստեմատիկ գողություններ, հասարակական անպարտաճանաչություններ։ Հայկական գյուղը հասարակականության տեսակետից բավական հետամնաց է, կուլտուրական ուժերը քիչ ունի, բնական է, նման պայմաններում կոոպերացիային և վիճակված թե հասարակականության կենտրոնը և թե կուլտուրական հիմնարկը լինելու։

Վարչական ներկա կազմը, գ՞ր բախատորեն, պատրաստ չե այդ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

պարտականությունները լիովին կատարել։ Նա դեռ ուժերու չատ գործ ունի։ Մոտ 100 կոոպերատիվներում ընտրովի աշխատակիցները բաժանվում են՝ 1) ըստ կոոպերատիվ ստաժի։

Աղյուսակ № 16

Վարչ. և աշխատում	Մինչև 1 տարի	1—3	3—5	5-ից բարձր	Ընդամենը
Վարչության անդամ . .	313	6	8	3	330
Վերատ. հանձ. » . .	244	10	6	2	262
Խորհրդի » . .	75	7	6	9	97
Ընդամենը՝	632	23	20	14	689
Տոկոսներով	91,7	3,3	2,9	21	1,00

Բացատրության հարկ չկա։

2) Ըստ կուսակցական պատկանելության և ստաժի։

Աղյուսակ № 17

	Ընդամենը	Անկ	Կոմ.	Կոմունիստների ստաժը				
				Անհայտ	Մինչև 17 թ.	20 թ.	21 ից հետո	Ընդամենն
Վարչ անդամ . .	330	262	68	21	2	17	28	68
Վերատ. հ. » . .	262	200	62	27	—	12	23	62
Խորհրդի » . .	97	57	40	31	—	3	6	40
Ընդամենը	689	519	170	79	2	32	57	170
Տոկոսով	100	73,72	26,7	46,5	1,2	18,3	33,5	100

Պետք է նկատի ունենալ, որ մեկ տարվա ընթացքում կոմունիստների թիվը հասել է 26,7 տոկոսի։ այսպիսի դրություն կարելի չէր միանգամայն բավարար համարել, չնայած փորձառությամբ և կոոպերատիվ ստաժով բարձր լինելը։ Ի դեպ, կոոպերացիայի վարչության կոմունիստ անդամների խոշոր տոկոսը թեկնածուներ են և նորեկ անդամներ։ Մնում է հետագայում առավ բաշել փորձված, բարեխիղճ անտեսավար և անձնազոհ գյուղացիների (կուսակցական թե անկուսակցական), որոնց գյուղացին լիակատար վստահություն իր կոպեկները, աբառզրություն, անտեսության բախտը։

3) Ըստ կրթական ցենզի։

Աղյուսակ № 18

	Անգր.	Տարրակ.	Միջն.	Բարձ.	Անհայտ.	Ընդամենը
Վարչ. անդամ	13	235	58	5	19	330
Վերատ. հ. »	19	182	34	2	25	262
Խորհրդի »	5	47	6	—	39	97
Ընդամենը	37	464	98	7	83	689
Տոկոսով	5,4	67,3	14,2	1,0	12,1	100

Չնայած ընդունենք «անհայտ»-ներին նույնպես անգրագետներ՝ կը ստացվի, որ մոտ մեկ քառորդը անգրագետ է, յերկու յերրորդը տարրական կրթությամբ՝ մեծ մասամբ սրանք են մինչև մեկ տարի ստաժով։ Կոոպերատիվների վոչ միայն կոոպերատորական կազմն է թույլ, այլ և կուլտուրական մակարդակը—անկայուն։ Սրանից պիտի յեզրակացնել, որ «Հայգյուղկոոպ»-ի հիմնական հարց պիտի դարձնի կոոպերատորների պատրաստման, դասատվության գործը։ Խոսք չկա, որ անգրագետների տեղը—կոոպերացիայի վարչական—դեկավար օրգանը չպետք է լինի։ Կոոպերատիվի վարչության անդամը պարտավոր է գրագետ լինել, թվաբանության գործողությունները և տարրական հաշվապահության իմանալ, հասկանալ, այլապես նա վատ կոոպերատոր և դեկավար կարող է լինել և ընկերության շահերին վնաս տալով հակառակ իր բաբի կամքի։

«ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-Ի ՏՆՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կոոպերատիվ Միության համար կազմա-հրահանգչական աշխատանքներին զուգընթաց կարևոր նշանակություն ունի անտեսավարական գործարքների պլանային զարգացումը։ Կոոպերացիան անտեսավարական ամբողջական սիստեմ է։ Նրա մոտավոր նպատակն է իր անդամ-արտադրող-մանր գյուղացիների անտեսությունների վերարերյալ գործադրել այն բոլոր միջոցները, որոնք կը ստեղծեն հետին թվով այդ անտեսության բարեկեցիկ

վիճակ։ Տնտեսավարական ասպարեզում վաստորեն ձեռնարկութիւնների, միջոցների այդ գումարն է, վոր նախազգելով ավյալ միջավայրի տնտեսության արտադրողական ուժերի վրա—ուղղում է նրա զարգացումը ցանկալի ճանապարհով։ Ուղիղ տնտեսավարական փոխհարաբերությունը միության և կոոպերացած տնտեսության մեջ մի կողմից և միության ու պետական արդյունաբերության՝ մյուս կողմից—պայմանավորում են կոոպերատիվ տնտեսավարական սիստեմի ներդաշնակ ծավալումն մեր պայմաններում։ Կոոպերացիայի սիստեմի յուրաքանչյուր ողակը պայմանավորում է չղթայի ամրողջությունը։

Գյուղացիական տնտեսության զարգացումն ողակված է նրա կազմակերպման, վարկավորման, մատակարարման, վերամշակման և վաճառահանման պրոցեսների գումարով։ զատել, չեզոքացնել չղթայի առանձին ողակը—նշանակում է քանդել, վտանգել նրա ուղիղ զարգացումը և ղեկավարությունը։

Կուսակցության և Խորհրդային իշխանության բոլոր վորոշումները կոոպերացիայի մասին, յելնում են նրա տնտեսավարական աշխատանքների՝ գյուղացիական տնտեսության առանձին առանձին այդ պրոցեսների ի մի հավաքման, կենտրոնացման և ղեկավարման հիմնական նպատակից։ Կոոպերատիվ միությունը իր գոյությունը կարող է պայմանավորել միայն և միայն այդ ուղիներով զարգացնելով իր կազմակերպչական տնտեսավարական ղեկավարությունը։

Ուղիղ մի տարի առաջ բանավեճի նյութ էր դարձել այն խնդիրը, թե «Հայդյուղկոոպ»—ը պիտի արդյո՞ք զբաղվի տնտեսավարական գործարքներով, պիտի ունենա արդյո՞ք մատակարարման, վաճառահանման և այլ ֆունկցիաներ, թե վոչ։*) Իր ժամանակին մենք ապացուցեցինք այդ տեսակետի անհետևողական և վտանգավոր լինելը։**)

Մի տարվա ընթացքում շատ ջուր անցավ։ Այժմ այդպես մտածողներն անախրոնիզմ են մեր իրականության մեջ, մանավանդ վոր 14—րդ Կուսակցական Կոնֆերենցիան վերոհիշյալ խնդիրների առթիվ հանել է իր դեկավար վորոշումները, վորոնք ի դեպս ամրապնդում են կոոպերացիայի զարգացման պատվանդանը։

*) «Խորհրդային Հայաստան» Ոգոստոսի 29 1924 թ. ընկ. Գ. Ստամբոլցյանի հոդվածը։

**) «Խորհրդային Հայաստան» սեպտեմբերի 30 1924 թ. մեր հոդվածը։

Ընթացիկ տարում «Հայդյուղկոոպ»—ը շատ հնչին աշխատանք է տարել մատակարարման ասպարեզում՝ անկախ իր բոլոր բարի ցանկություններից։ Գյուղատնտեսական գործիքների, մեքենաների հայթայթման վոչչ աշխատանքը վերապահված է յեղել Գյուղատնտեսական Բանկին։ Նրա այս աշխատանքի բնույթագիծը մեզ այստեղ չպիտի հետաքրքրի։ Կարևոր է չնչտել, վոր ստորին կոոպերատիվների կատեգորիկ պահանջմամբ միությունն առանձնացրել է 100,000 ռուբ. ֆոնդ՝ ինվենտարահայթայթման համար։ Նրա այս ձեռնարկության պիտի աջակցել ամեն կերպ, լուսաբանելով այն։

Միությունն իր պերիֆերիայի անմիջական վարկավորման (փոխատվության) ասպարեզում անկասկած ,իրենից անկախ պատճառներով, նմանապես քիչ գործ է կատարել։ Իր տեղում մենք չնչտեցինք, վոր «Հայդյուղկոոպ»—ի հերթական առաջնակարգ ինդիրներից մեկը՝ կոոպերատիվներին և ամենից առաջ վարկային կոոպերացիային փոխատվություն տալն է։ Ընթացիկ տարում միության վարկային քաղաքականությունն ուղղված է յեղել գյուղատնտեսական մթերքների վերամշակման ու բարձրացման նպատակին։

Գյուղատնտեսական պրոդուկցիայի վերամշակման և վաճառահանման ասպարեզում միությունը խոշոր աշխատանք է կատարել։ Այս առթիվ առ 1—ը հոկտեմբերի կոոպերատիվներին բաց արած վարկի գումարը հասնում է կլոր թվով 650,000 ռ., ընդդեմ անցյալ 23—24 տարվա 50,000 ռուբլու։ Միության հայթայթող ապարատը հանդիսացել է բացառապես վարկային և մասնագիտական կոոպերացիան։

Ստորև զետեղված աղյուսակը ներկայացնում է այդ աշխատանքի գումարը կլոր թվերով։

Միության գործառնությունների 95 տոկոսը կոմիսիոն ոգղությամբ են կատարված և վարձատրության չափն արտահայտվել է 4—8 տոկոսի սահմաններում։ Պրոդուկցիայի կանոնավոր ռեալիզացիայի համար միությունն ունի ներկայացուցիչներ Մոսկվայում և Հյուսիսային Կովկասում, վաճառահանման (մեծաքանակ և մանրածախս) պունկտեր՝ Թիֆլիսում և Յերևանում։ Մեծաքանակ ռեալիզացիան կատարված և կատարվում է 95 տոկոսով պետական և կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով։

Աղյուսակ № 19

Ապրանքի տեսակ	Բաց արած վարկի գումարը	Հայթայթված և		
		Ապրանքի քանակը.	Արժողությունը *)	Վոր տոկոսն և բեալ. տր.
1. Շվեյցար. պանիր . .	100,000	9,300	232,000	30,0
2. Թաշի » . .	60,000	8,000	112,000	85,0
3. Ցուղ (հալած յեվ կարագ)	65,000	2,000	70,000	50,0
4. Գինի	100,000	40,000 գ.	160,000	50,0
5. Ոդի յեվ սպիրտ . .	30,000	150,000 °	45,000	100,0
6. Բամբակ	120,000	90,000 փ.	470,000	100,0
7. Բոյոժ	10,000	826 փ.	15,000	100,0
8. Շերամի հունդ . . .	26,000	26,000 տ.	65,000	0,
9. Պանածո մրգեր . .	15,000	7,000 փ.	42,000	30,0
10. Զոր և թարմ մրգ .	12,000	2,500 փ.	12,500	25,0
11. Բրինձ	20,000	7,000	35,000	0,
12. Մինոթաստ	20,000	4,000 փ.	60,000	0,
13. Ջուր	6,000	100,000	7,000	75,0
14. Սերմացու	60,000	30,000	60,000	50,0
15. Մեղր	10,000	720	12,000	50,0
16. Զանազան	32,000	—	43,000	50,
	686,000	—	1,120,500	48,00

Այսպիսով «Հայգյուղկոոպ»-ն ընթացիկ տարում լիակատար բաղաքացիություն և ձեռք բերել գյուղատնտեսական մթերքների չուկայում: Այդ հաջողությունների ամրապնդման գծով նա թեև ընթաց տարում պիտի կարողանա նաև դեկավարել այն՝ զգալով մասնավոր գնորդների ախորժակը, ողնելով պետական արդյունավոր գնորդների աճումը՝ դյուրացնելու գյուղատնտեսական հում նյութերի հայթայթման գործը:

*) Գները հաշվում է ստ 1-ը հոկտեմբերի չուկայի մեծաքանակ գների 75 տոկոսով:

Մթերքների չրջանառությունն ըստ կվարտալների կազմում է.

Առ 1-ն հունվարի 1925 թ.		364.027 ռ.
Առ 1-ն ապրիլի »		813.406 ռ.
Առ 1-ն հուլիսի »		2.042.030 ռ.
Առ ն հոկտեմբ. »		3.917.102 ռ.

Յեթե հաշվի առնենք Գյուղատնտեսական կոոպերացիայի բավականաչափ սիստեմի չրջանառությունը, վոր հասնում է 20,000,000 ռուբ., այն ժամանակ պարզ կը լինի՝ թե վորքիսի տեղ է գրավում նա մեր ժողովրդական տնտեսության մեջ:

Հայգյուղկոոպը փակել է իր տնտեսավարական տարին վորոշ ոգուտով:

Իր ներկայումս կազմակերպչական ու տնտեսավարական տապարեղում տարած հաջողությունները կոոպերացիան պարտավոր է լայնացնել ու խորացնել: Նրա գերը սոցիալիստական տնտեսության կազմակերպման մեջ բացառիկ է: Հանձինս Կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության գյուղացի աշխատավոր-ագգաբնակչության կոոպերացիան ունի հզոր աջակից և գեկավար: Այս հայտով, այս գիտակցությամբ մենք կրկնում ենք—գյուղատնտեսական կոոպերացիան ավելի մեծ ուշադրություն, նրա մթերքների՝ բառապատիկ աճակցություն—մասսայականացնելու Լենինի պատգամները:

26–27 նոյեմբերի 1925 թ.

Յերևան.

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Z C.C.P.A. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникова
Ա. ՍԱՄՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

Էջ

7. Հեղինակի կողմից 3
1. Գյուղատնտեսական կոոպերացիայի խնդիրները . . . 5
2. Գյուղատնտեսական կոոպերացիայի դինամիկան . . . 14
3. Կաթնատնտեսական կոոպերացիան և նրա սոցիալական կազմը 21
4. Վարկային կոոպերացիան և նրա սոցիալական կազմը անցյալում յեվ ներկայում 31
5. Գյուղատնտեսական կոոպերացիան հատուկ կուլտուրաների ասպարեզում 45
6. «Հայդուզկոոպ»-ի անտեսավարական աշխատանքը . . 51

Գրքի շտապ լույս ընծայելու պատճառով սպրդել են շատ սխալներ, վորոնց ուղղելը անհնարին յեղավ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0209228

ԳԻՆՆ Է 30 ԿՊՊ.